

Կենսապահովման եւ ինֆնապալիման խթանում

Գործառնական ուղեցույց ֆաղաֆային բնակավայրերում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ

© ՄԱԿ ՓԳՀ, 2011: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Հեղինակային իրավունքի սեփականատերերը լիազորում են նյութի վերարտադրությունը եւ տարածումը կրթական կամ այլ ոչ առևտրային նպատակներով՝ առանց որևէ գրավոր թույլտվություն նախօրոք ստանալու՝ պայմանով, որ աղբյուրն ամբողջությամբ հիշատակված է: Վերավանառի կամ այլ առևտրային նպատակներով վերարտադրությունը կամ որևէ նպատակով թարգմանությունն արգելվում է՝ առանց հեղինակային իրավունքի սեփականատերերի կողմից գրավոր թույլտվություն ստանալու: Նման թույլտվություն ստանալու նպատակով դիմումները պետք է ուղղել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի Կրթական բաժին, էլ-փոստի հետևյալ հասցեին՝ hqts00@unhcr.org:

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից ձեռք են առնվել բոլոր ողջամիտ նախագրուշական միջոցները՝ այս հրատարակության մեջ պարունակվող տեղեկությունները ստուգելու համար: Այսուհանդերձ, հրատարակված նյութը տարածվում է առանց որևէ տեսակի երաշխավորագրի՝ թե՛ բացահայտ, թե՛ ներառյալ: Նյութը մեկնաբանելու եւ օգտագործելու պատասխանատվությունը կրում է ընթերցողը: Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը որևէ կերպ չի կարող պատասխանատվության ենթարկվել այս հրատարակության օգտագործումից բխած վնասների համար:

Սույն փաստաթղթի օրինակները կարելի է ստանալ այստեղից.

ՄԱԿ ՓԳՀ

Ծրագրային աջակցության եւ կառավարման բաժին

Գործառնական լուծումների եւ անցումային հարցերի բաժանմունք (ԳԼԱԲ) / Կենսապահովման ծրագրերի համար պատասխանատու ստորաբաժանում

Մոնթրիլյան փողոց 94 [Rue de Montbrillant]

1202 ժնեւ, Շվեյցարիա

էլ-փոստ. hqliveli@unhcr.org

Շապիկի լուսանկարը. Եմեն/ փախստականներ/ Բասթին ֆաղաֆային համայնք, Ադեն/ Մոհամեդը ստոնարանը վերանորոգելու դիմաց վերցնում է 10 ԱՄՆ դոլար: «Երբ ես իմ աշխատանքային սեղանի հետևում եմ, մի կողմ եմ դնում

հենակներս եւ մոռանում իմ հաշմանդամության մասին»։ Օրական ստանալով 20 ԱՄՆ դոլար՝ Աբդուլը վաստակում է
եմենցի պետական աշխատողի միջին աշխատավարձի քառապատիկը: / ՄԱԿ ՓԳՀ / Ռ. Նուրի / 2009 թ. ապրիլ

Գրաֆիկական ձեւավորման հեղինակ՝ Ա. Մանուկյի/Հոռոմ

Կենսապահովման եւ ինֆնապալիման խթանում

Գործառնական ուղեցույց ֆաղափային բնակավայրերում փախստականների պաշտպանության եւ լուծումների վերաբերյալ

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
ԱՄՓՈՓ ԵՎԱՐԱԳԻՐ.....	5
ԵՊԱՏԱԿԸ.....	7
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶՖՈՒՆՔՆԵՐ	7
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒԹՅՈՒՆ.....	8
1. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ	8
2. ԻՆՏԵԳՐՈՒՄ	11
3. ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	13
4. ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	16
5. ԻՆՔՆԱՊԱՎԻՆՈՒՄ.....	18
6. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	20
7. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	24
8. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ	25
9. ՀԱՆՁՆՈՒՄ	27
ՀԱՎԵԼՎԱԾ	30
ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀՌԾ	-	Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄԿ	-	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԲԳԹ	-	Բազմագործառության թիմ
ԲԶԾ	-	Բիզնեսի զարգացման ծառայություն
ԴՀԳ	-	Դիմումների համախմբված գործընթաց
ԵՄԱԿԹ	-	Երկրում Միավորված ազգերի կազմակերպության թիմ
ԻԳ	-	Իրականացնող գործընկեր
ԻԳԱ	-	ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձ
ՀճԿ	-	Համայնքային կազմակերպություն
ՄԱԿԶԱԾ	-	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման աջակցության ծրագիր
ՄՀԳ	-	Մարդիկ՝ Քաղաքականություններ, հաստատություններ և գործընթացներ
ՄՖՀ	-	Միկրոֆինանսավորման հաստատություն
ՈԿԿ	-	Ոչ կառավարական կազմակերպություն
ՍԳՀԲ	-	Սեռական և գենդերային բուժություն
ՏՀՀԿ	-	Տեխնոլոգիաների հասանելիության համայնքային կենտրոններ
ՏՀՏ	-	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
ՏՄԲ	-	Տարիք, սեռ և բազմազանություն
Ուժեղ -	-	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Աշխատանքի իրավունքը մի իրավունք է, որը սահմանվել է *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի* հոդված 23.1-ով եւ *«Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին» միջազգային դաճնագրի* հոդված 6-ով: Այն բոլոր տղամարդկանց եւ կանանց, անկախ տարիքից եւ անցած ուղուց, թույլ է տալիս ապրել արժանապատվությամբ եւ դառնալ ինքնապավեն: Աշխատանքի իրավունքը, համաձայն 1951 թ. *Տնեւի կոնվենցիայի* հոդվածներ 17-ի, 18-ի եւ 19-ի, ընդգրկում է փախստականներին:

Քաղաքային համատեքստում պաշտպանվածությունն ու կենսապահովումը սերտորեն միահյուսված են: Բռնի տեղահանված մարդիկ ապրանքներ, ծառայություններ ձեռքբերելու եւ կանխիկ գումարի կարիք ունեն ամեն օր, սակայն քաղաքային բնակավայրերի բազմաթիվ առանփնահատկություններ ապրուստ հայթայթելը վերածում են վտանգավոր գործընթացի: Ընդունող կառավարության որդեգրած քաղաքականությունը հաճախ փախստականներին հնարավորություն չի տալիս օրինական աշխատանք, սեփականություն կամ բիզնես ունենալ: Նույնիսկ այն դեպքերում, երբ օրենքը փախստականներին չի արգելում աշխատել, պատշաճ աշխատատեղերի հասանելիությունը նրանց համար շարունակում է մնալ մի հսկա խոչընդոտ: Պետության (ուստիկանություն, ներգաղթի ծառայություն) կողմից իրականացված խտրականության ու հետապնդումների դեպքերը կարող են սահմանափակել աշխատելու կամ տնտեսական գործունեության մեջ ներգրավվելու նպատակով փախստականների ազատ տեղաշարժը: Փախստականները, քաղաքական այլ կարիքավորների հետ համեմատ, հաճախ բախվում են ավելի մեծ ծախսեր կատարելու անհրաժեշտությանը՝ կապված կառավարների հետ, ինչը հաճախ պայմանավորված է լինում փաստաթղթերի բացակայությամբ: Հոգատերերը եւ գործատուները, հաճախ ավելի բարձր վարձավճարներ կամ հավելյալ «վհարներ» պահանջելով, փախստականներին ենթարկում են խտրականության: Փախստականները թիրախ են հանդիսանում քրեական տարբերի համար, ովքեր գիտեն, որ նրանք դժվար թե հետամուտ լինեն իրավական օգնության: Զբաղմունքն ավելի հաճախ են օգտագործում մանկական աշխատուժը եւ իրենց վիճակից դուրս գալու համար ներգրավվում ռիսկային գործունեության մեջ, ներառյալ՝ ապօրինի եւ քրեական այնպիսի գործողությունները, ինչպիսիք են մարմնավաճառությունը եւ մաքսանկատությունը: Հանրային առողջապահության եւ կրթական ծառայություններից օգտվելը փախստականներին կարող է դնել ֆինանսական այնպիսի բեռի տակ, որը գերազանցում է քաղաքական այլ կարիքավորների ուսերին ընկնող բեռի չափը: Բազմաթիվ դեպքերում ֆինանսական ցնցումներն առաջ են գալիս դպրոցական վհարների եւ հիվանդանոցային ծախսերի տեսքով, որոնք գերազանցում են փախստականների ամսական եկամուտը եւ կարող են նրանց դարձնել իրենց համայնքի կամ գործատուների պարտապանը:

Պաշտպանվածություն ապահովելու խնդիրներից անդին՝ կենսամիջոցներ ունենալու իրավունքները պաշտպանելը եւ այդ իրավունքների իրացման հարցում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից փախստականներին աջակցություն ցուցաբերելը քաղաքային բնակավայրերում տեղին եւ անհրաժեշտ է հետեւյալ պատճառներով.

- Բազմաթիվ փախստականներ քաղաքներ են գալիս, քանի որ ունեն այնպիսի արժանիքներ, որոնք ավելի արդյունավետորեն օգտագործվում են քաղաքային համայնքներում, քան համբարներում կամ գյուղական շրջաններում: Կենսապահովման միջոցների ստեղծմանն ուղղված ծրագրերը խթանում եւ պահպանում են այնպիսի հմտությունների եւ արժանիքների օգտագործումը, որոնք տնային տնտեսություններին եւ անհատներին թույլ են

տալիս խուսափել աղֆատության հիրաններում հայտնվելուց եւ, միեւնույն ժամանակ, օժանդակել իրենց հայրենի համայնքներին:

- Տնային տնտեսությունների տնտեսական կարողությունների մեծացումը կարող է խթանել տեւական լուծումները, մասնավորապէս՝ հաջող հայրենադարձությունը: Փախստականները, ովքեր կարող են ստեղծել եւ պաշտպանել իրենց կենսապահովման միջոցները, առավել մեծ չափով են ընդունակ եւ հակված՝ վերադառնալ իրենց հայրենի երկրներ, երբ դա անելն անվտանգ է:
- Կենսապահովման միջոցների ստեղծմանն ուղղված ծրագրերը, որոնցից շահում է նաեւ տեղի բնակչությունը, կարող են մեղմել ընդունող կառավարության մտահոգությունները՝ կապված ֆաղաֆերում փախստականների ներկայության հետ (տնտեսական մրցակցություն, ռեսուրսների շահագործում, եւ այլն), եւ բարելավել ապաստան հանդիսացող երկրում միջավայրը:
- Ապրուստ ապահովելու ձգտումն օգնում է վերականգնել փախստականների արժանապատվությունը եւ անկախությունը:

Կենսապահովման միջոցների վերաբերյալ ծրագրեր կազմելուն նվիրված այս գործառնական ուղեցույցը հիմնականում ուղղված է ՄԱԿ ՓԳՀ-ի տեղական գրասենյակների աշխատակիցներին՝ սկսած երկրներում կազմակերպության ներկայացուցիչներից եւ դաշտային աշխատանքների ավագ ղեկավարներից, ինչպէս նաեւ՝ ուղղված է բազմագործառնային թիմերին (ԲԳԹ), որոնց կազմում են պաշտպանության, ծրագրերի, համայնքային ծառայությունների, դաշտային եւ կենսապահովման միջոցների հարցերով պատասխանատուները, երբ հնարավոր է: Այն նաեւ ուղղված է կառավարության անդամ հանդիսացող եւ գործառնությունների ու իրականացման համար պատասխանատու գործընկերներին, ներառյալ հնարավոր նոր գործընկերները, որոնց թվում կարող են լինել միկրոֆինանսավորման հաստատություններ, մասնավոր հատվածը, հիմնադրամներ եւ ակադեմիական հաստատություններ: Ուղեցույցն ուղղված է նաեւ տարածաբանային ներկայացուցչություններին եւ կենտրոնական գրասենյակում որոշումներ ընդունողներին:

Սույն ուղեցույցն անդրադառնում է ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող բոլոր այն ֆաղաֆերակ անձանց (ԻԳԱ), ովքեր ներկայում գտնվում են ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատով սահմանված եւ նրան պատվիրակված պատասխանատվության ներքո, ներառյալ՝ փախստականներին, ապաստան որոնողներին, ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ), ֆաղաֆայություն չունեցող եւ հայրենադարձող անձանց: Ուղեցույցը մանրամասն ներկայացնում է, թե որ դեպքերում եւ ինչպէս են զանազան խմբերի նկատմամբ մոտեցումները տարբերվում: Այս փաստաթղթի նպատակներից էլնելով՝ «փախստական» եզրույթը վերաբերում է ընդհանրապէս ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձանց բոլոր խմբերին: Չնայած ՄԱԿ ՓԳՀ-ն չունի տեղացի բնակչությանն աջակցելու մանդատ, ընդհանրապէս համարվում է, որ նրանք պետք է ներգրավվեն այն գործողություններում, որոնք պլանավորվում են փախստականների բարձր խտություն ունեցող տարածքներում:

Այս գործառնական ուղեցույցը հիմնված է 2008 թվականից ի վեր ֆաղաֆային համայնքներում իրականացված բազմազան ծրագրերից ֆաղված դասերի եւ ի մի բերված լավագույն փորձի վրա: Այն լրացնում է կենսապահովման միջոցների, գնահատման, միկրոֆինանսավորման եւ աշխատանքի իրավունքի առնչությամբ շահերի պաշտպանության թեմաներով

ընդհանուր ուղեցույցը, որը հասանելի է Ինտրանետի «Կենսապահովման միջոցներ» բաժնում (Պաշտպանություն եւ Գործառնական թեմաներ --> Կենսապահովման միջոցներ):

ՆՊԱՏԱԿԸ

ՄԱԿ ՓԳՀ ազգային ծրագրերին տրամադրել ցուցումներ՝ **փախստականների համար կենսամիջոցների ապահովման որակյալ ծառայությունների** (որոնք համարժեք կլինեն տեղի բնակչությանը հասանելի ծառայություններին) հասանելիության ընդլայնման եւ դադարեցման (իսկ անհրաժեշտության դեպքում՝ նման ծառայությունների տրամադրման եւ/կամ դրանց աջակցության) նպատակով:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Առանցքային սկզբունքները հիմնված են աշխարհով մեկ լավագույն փորձի եւ ստանդարտների, ՄԱԿ ՓԳՀ-ի դաշտային աշխատանքներից բաղադրված հաջող աշխատանքային փորձերի եւ ՄԱԿ ՓԳՀ-ի «Տարիք, սեռ եւ բազմազանություն» (SUF) մոտեցման վրա, որը պաշտպանում եւ բարձրացնում է մասնակցային, իրավունքահեն եւ համայնքահեն ռազմավարություն:

- 1. Հասանելիություն.** Պաշտպանել եւ ապահովել փախստականների իրավունքը՝ օգտվել աշխատանքի եւ կենսամիջոցների ստեղծման այլ հնարավորություններից, որքանով դրանք հասանելի են տեղացիներին:
- 2. Ինտեգրում.** Խուսափել գուցահեռ գործող ծառայությունների տրամադրումից կամ ստեղծումից: Կիրառել շահերի պաշտպանության եւ կարողությունների ստեղծման միջոցներ՝ խորացնելու փախստականների ինտեգրումը մասնավոր եւ պետական ծառայություններում եւ հաստատություններում, ինչը կարող է խթանել կենսապահովման միջոցների ստեղծումը եւ ինքնապավիհումը: Նպաստել տեղական գարգացման նպատակով պլանավորմանը եւ գործընթացներին, ինչպես նաեւ ՄԱԿ ՓԳՀ ռեսուրսները ներդրել տեղական ծառայություններում:
- 3. Նախնական գնահատում.** Իրականացնել կենսապահովման իրավիճակի նախնական գնահատումներ՝ հիմնվելով սոցիալ-տնտեսական չափանիշների վրա, եւ որակյալ տվյալների հիման վրա մշակել ռազմավարական ծրագիր: Բացահայտել գործող ֆազակականություններով պայմանավորված միջավայրը, ինչպես նաեւ հաստատությունները եւ ծրագրերը, հասկանալ փախստական բնակչության ներքին գոյություն ունեցող բազմազանությունը:
- 4. Հասցեականություն.** Ծրագրային միջամտությունները համադրել կենսապահովման կարողությունների (կենսապահովման գոյություն ունեցող այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հմտությունները եւ նախկին աշխատանքային փորձը) համապատասխան մակարդակների եւ փախստական բնակչության մոտ բացահայտված կարիքների հետ: Մշակել բազմազան ռազմավարական ծրագիր, որը կպարունակի կարճաժամկետ եւ երկարաժամկետ նպատակներ եւ դրանց ուղղված գործողություններ:

5. Ինֆնապալիմում. Օժանդակել փախստականներին՝ դառնալու ինֆնապալեն: Մարդասիրական գործակալությունների կողմից սրամադրվող ֆինանսական օգնությունը/ սնունդը/ վարձավարների մարումը պետք է կրեն կարճաժամկետ բնույթ, հատկացվեն որոշակի պայմանների բավարարման պայմանով և աստիճանաբար տանեն դեպի ինֆնապալիմում խթանող գործողությունների՝ որպես առավել երկարաժամկետ զարգացման մի մաս:

6. Գործընկերություններ. Ներքին և արտաքին շահագրգիռ կողմերին համախմբել կենսապահովման իրավիճակի նախնական գնահատման արդյունքների շուրջ՝ համատեղ ուժերով որոշելու կենսամիջոցների ստեղծմանն ուղղված աջակցության հնարավորությունները և մշակել բազմամյա ռազմավարական ծրագիր: Ապահովել, որ կենսամիջոցների ստեղծմանն ուղղված ռազմավարական ծրագրի իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը հաշվի առնեն տարբեր գործընկերների և շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ զարգացման ոլորտում աշխատող գործընկերների, մասնավոր հատվածի հաստատությունների և համայնքի ներկայացուցիչների համեմատական առավելությունները:

7. Մասնակցություն. Համայնքները ներգրավել ծրագրերի պլանավորման, իրականացման և մոնիտորինգի բոլոր փուլերի շրջանում: Ընդլայնել շփումները փախստականների համայնքների հետ և պարբերաբար հաղորդակցվել, կազմակերպել ծրագրերի տարածման գործողություններ և փախստականներին տեղեկացնել նրանց կենսապահովման միջոցների ավելացման հնարավորությունների և ծրագրերին մասնակցելու որակավորման պայմանների մասին:

8. Մոնիտորինգ և գնահատում. Պարբերաբար մոնիտորինգի ենթարկել և գնահատել ծրագրային նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու ուղղությամբ առաջընթացը՝ անմիջական աջակցությունից աստիճանաբար հրաժարվելու, ռազմավարության և մոտեցման անհրաժեշտ փոփոխության, ինչպես նաև սրանցից բխող՝ պահանջվող միջոցների տեսակետից:

9. Հանձնում. Կենսամիջոցների ապահովմանն ուղղված պլանի շրջանակներում մշակել և իրականացնել ծրագրի ամփոփման և հանձնման ռազմավարություն՝ նպատակ ունենալով ծրագրային միջամտությունները ռեսուրսատար և դրամաշնորհների վրա հենվող աջակցությունից աստիճանաբար վերածել կենսամիջոցների ապահովման նպատակով առավել երկարաժամկետ օժանդակության, և տեւական լուծումների հասնելու միջոցով ժամանակի ընթացքում նվազեցնել օժանդակության և կենսամիջոցների ստեղծման նպատակով աջակցության կարիք ունեցողների քանակը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Հասանելիություն

Պաշտպանել և ապահովել փախստականների իրավունքները՝ օգտվել աշխատանքի և կենսամիջոցների ստեղծման այլ հնարավորություններից, որքանով դրանք հասանելի են տեղաբնակներին: ՄԱԿ ՓԳՀ-ն պատասխանատվություն է կրում ապահովելու փախստականների՝ զբաղվածության այնպիսի տարբերակներ ընտրելու ազատությունը, որոնք նրանց հնարավորություն կտան ստեղծել եկամուտ և բավարարել իրենց հիմնական կարիքները՝ առանց պետական

իշխանությունների կամ ֆազաբացիական հասարակության կողմից ճնշման, շահագործման, ահաբեկման կամ խտրականության ենթարկվելու:

Հասանելիության ընդլայնմանն ուղղված գործնական քայլեր

1.1 Արդյունավետ իրավական միջավայրի խթանում

Վերլուծել յուրաքանչյուր երկրում գործող համապատասխան օրենքները և իրավական ակտերը ու նախագծել այս օրենքների պրակտիկ իրականացումը՝ կենսամիջոցների հասանելիության ապահովման և ծառայությունների տրամադրման տեսանկյունից:

-- Վերլուծության ենթարկել փախստականների մասին օրենքը կամ օրենսդրական այլ ակտ կամ հրահանգ, որոնք նկարագրում են աշխատանքի և կենսապահովման միջոցների ստեղծման հնարավորություններից օգտվելու՝ փախստականների իրավունքը: Պարզել ընդունող երկրի արած վերապահումները 1951 թ. կոնվենցիայի հոդվածներ 24-ին, 17-ին և 18-ին, որոնք վերաբերում են զբաղվածությանը: Մոնիտորինգի ենթարկել ֆազաբացիականություններում ցանկացած փոփոխություն և «Աշխատանքի իրավունքի» վերաբերյալ տեղեկությունները մշտապես պահել թարմացված վիճակում:

-- Կառավարություններին և ՄԱԿ ՓԳՀ գործընկերներին հիշեցնել իրենց տարածքներում բնակվող փախստականների նկատմամբ նրանց պարտավորությունների մասին՝ կապված աշխատանքի հասանելիության և զբաղվածության համապատասխան ծառայությունների հետ:

-- Բացահայտել այն սահմանափակումները, որոնց համաձայն օտարերկրացի աշխատողներին արգելվում է ներգրավվել զբաղվածության որոշակի տեսակներում կամ գործարարության որոշակի ոլորտներում: Հետամուտ լինել, որպեսզի վերացվի խտրական բնույթի ցանկացած հրահանգ կամ պրակտիկա, որը խոչընդոտում է աշխատանքի և կենսապահովման միջոցների հասանելիությանը: Սրանց թվում են փախստականներից գանձվող ավելի բարձր վճարները, փախստականների խմբերի կամ հատուկ կարիքներ ունեցող անձանց մարգինալացումը, փաստաթղթերը/դիպլոմները կորցրած փախստականներին մերժելը, և այլն, կամ փոքրամասնությունների և տարբեր խմբերի անդամների նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:

-- Պաշտպանել փախստականների շահերը՝ ունենալու իրենց կարգավիճակը հաստատող համապատասխան փաստաթղթեր/նույնականացման փայտեր, որոնք նրանց համար կհեշտացնեն աշխատանքի հնարավորություններից և կենսապահովման ծառայություններից օգտվելը: Բանակցել աշխատառուկայում պահանջարկ վայելող հմտությունների տիրապետող փախստականներին և ապաստան որոնողներին աշխատելու թույլտվություններ տալու շուրջ:

-- Վերլուծել ընդունող երկրում զբաղվածության իրավիճակը, հատկապես՝ ոչ ֆորմալ հատվածում, քանի որ փախստականների համար վերջինս առաջարկում է զբաղվածության ավելի լայն հնարավորություններ:

1.2 Ծառայությունների հասանելիության վերհանում և առաջնորում

Քաղաքային բնակավայրերում էարտեզագրել կենսամիջոցների ստեղծմանն աջակցող՝ պետական եւ մասնավոր հատվածում առկա հնարավորությունները: Հասանելիության ընդլայնման նպատակով ձեռակերպել արդյունավետ աշխատանքանակներ:

-- Բացահայտել եւ գնահատել կենսամիջոցների ստեղծմանն աջակցող հնարավորությունները եւ ծառայությունները: Դրանք կարող են ներառել հետեւյալը.

- բանկեր եւ/կամ միկրոֆինանսավորման ֆորմալ եւ ոչ ֆորմալ հաստատություններ, որոնք առաջարկում են մի շարք ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են խնայողությունները, վարկերը, փոխանցումները, ապահովագրությունը.
- մասնագիտական ու տեխնիկական կրթության եւ ուսուցման ֆորմալ եւ ոչ ֆորմալ հաստատություններ, համալսարաններ (դրանց մի մասը կարող է լինել հեռավար կամ հասանելի լինել Տեխնոլոգիաների հասանելիության համայնֆային կենտրոններին¹ [SZZY] միջոցով)
- ձեռներեցության ուսուցման հաստատություններ.
- բիզնեսի զարգացման ծառայություններ տրամադրողներ.
- զբաղվածության ծառայություններ եւ աշխատառուկայի վերաբերյալ տեղեկություններ տրամադրողներ.
- արհեստների ուսուցման եւ աշխատանքի տեղավորման կառույցներ.
- իրավաբանական ծառայություններ, որոնք առնչվում են զբաղվածության եւ աշխատանքի բույլավորությունների տրամադրմանը կամ բիզնեսի գրանցմանը:

-- Քարոզել եւ համապետական ու տեղական իշխանությունների (Աշխատանքի նախարարություն/ տեղական իշխանության մարմիններ, համայնֆապետարաններ), զարգացման բնագավառի գործընկերների (օրինակ՝ ԱՄԿ-ն եւ այլ կազմակերպություններ) եւ մասնավոր հատվածի հետ բանակցել այն հարցի շուրջ, որ ծառայությունները փախստականներին, հատկապես՝ դրանց կարիքն ունեցող երիտասարդներին ու կանանց, հասանելի լինեն նույն կամ ավելի պակաս արժեքով, քան տեղացիներին:

-- Որդեգրել շահերի պաշտպանության ինտեգրացված ռազմավարություն, որպեսզի կառավարության կողմից ապահովվող առկա ծառայությունները մատչելի լինեն փախստականներին՝ բարելավելու նրանց առողջության եւ կրթության վիճակը (տե՛ս «Քաղաքային բնակավայրերում փախստականների պաշտպանության եւ լուծումների գործառնական ուղեցույց. Կրթության հասանելիության ապահովում եւ Առողջապահության հասանելիության ապահովում», ՄԱԿ ՓԳՀ 2011):

-- Այնպիսի տարածքներում, որտեղ ապրում են մեծ թվով փախստականներ, ուղղակիորեն կամ գործընկեր կազմակերպության միջոցով օժանդակել կառավարության կողմից տրամադրվող ծառայություններին:

¹ «Համայնֆային տեխնոլոգիաների հասանելիություն»-ը համաշխարհային մասշտաբի ծրագիր է, որի նպատակն է ընդլայնել կենսամիջոցների ստեղծման եւ կրթության հնարավորությունների հասանելիությունը տեխնոլոգիաների կիրառման, օրինակ՝ համակարգչային գրագիտության դասավանդման եւ հեռավար ուսուցման միջոցով: 2011 թ. հունվարի դրությամբ՝ այն իրականացվում էր 13 երկրներում:

-- Ներգրավել ակադեմիական հաստատություններ, համալսարաններ եւ տեխնիկական կրթություն ապահովող ֆուլեջներ եւ ի մի բերել աջակցություն՝ կրթաթոշակային ծրագրերի իրականացման նպատակով:

-- Խթանել առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց համար հասանելիությունը՝ խուսափելու կանանց, երեխաների, փոքրամասնություն հանդիսացող խմբերի, ծերերի եւ հաշմանդամություն ունեցողների անտեսումից:

2. Ինտեգրում

Խուսափել գուգահեռ գործող ծառայությունների տրամադրումից կամ դրանց ստեղծումից: Կիրառել շահերի պաշտպանության եւ կարողությունների ստեղծման միջոցներ՝ խորացնելու փախստականների ինտեգրումը մասնավոր եւ պետական ծառայություններում եւ հաստատություններում, որոնք կարող են նպաստել կենսամիջոցների զարգացմանը եւ ինքնապավինմանը: ՄԱԿ ՓԳՀ-ն պետք է իր նպաստը բերի տեղական զարգացման պլանավորմանը եւ գործընթացներին եւ ներդրի ռեսուրսներ տեղական ծառայություններում:

Ինտեգրման խթանմանն ուղղված գործնական քայլեր

2.1 Աշխատանք տեղական առաջնորդների եւ հաստատությունների հետ

Խուսափել գուգահեռ կառույցների ստեղծումից եւ գործընկերների հետ միասին իրականացնել ֆարոգչություն/շահերի պաշտպանություն, որպեսզի փախստականների կարիքները ներառվեն ազգային ռազմավարական պլանավորման մեջ եւ դոնոր կազմակերպությունների առաջարկներում:

-- Կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունների գնահատման, պլանավորման, իրականացման եւ մոնիտորինգի ընթացքում համապետական եւ տեղական իշխանությունների հնարավոր ամենալիարժեք ներգրավման միջոցով ապահովել պետության լիակատար մասնակցությունը եւ գործընթացի պատասխանատուն լինելու հանգամանքը:

-- Օգտագործել գոյություն ունեցող համակարգման մեխանիզմները՝ նորերը ստեղծելու փոխարեն, ապահովել ՄԱԿ ՓԳՀ-ի եւ տեղեկատվական ու հաղորդակցության արդյունավետ համակարգ ունեցող պետական հաստատությունների միջեւ արդյունավետ հաղորդակցման եւ համակարգման մեխանիզմների առկայությունը, աջակցել փախստականների համար ծառայությունների հասանելիությունը մոնիտորինգի ենթարկելու՝ կառավարական հաստատությունների ներքին կարողությունների զարգացմանը:

-- Հետամուտ լինել փախստականներին վերաբերող խնդիրները երկրի ռազմավարություններում, դոնոր կազմակերպությունների առաջարկներում եւ ազգային ծրագրերում ներառելուն՝ կառավարության, միջպետական դոնորների, տվյալ երկրում ՄԱԿ-ի թիմի (ՄԱԿԶԱԾ-ի միջոցով) եւ կենսապահովման միջոցների համակարգման հարցերով զբաղվող խմբերի/ֆորումների հետ համատեղ:

-- Բարձրացնել ընդունող համայնքների, մասնավորապես՝ տեղական առաջնորդների, գործարար անձանց եւ ֆաղաֆացիական հասարակության կազմակերպությունների ընկալունակությունը փախստականների խնդիրների նկատմամբ:

2.2 Ինտեգրումը պետական ծառայություններում

Հետամուտ լինել, որպեսզի ֆազաբային համայնֆններում բնակվող փախստականներին վերաբերվեն նույնիերպ, ինչպես վերաբերվում են տեղացիներին, եւ խթանել փախստականների ինտեգրումը պետական համակարգում:

-- Պաշտպանել փախստականների իրավունքը՝ օգտվել պետական հաստատություններից եւ ծառայություններից նույն արժեքով, ինչ վճարում են տեղացիները, կամ՝ դրանից պակաս արժեքով:

-- Բացահայտել դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող՝ աշխատանքի եւ զբաղվածության ոլորտի այնպիսի ծրագրեր, որոնք կարող են օգտակար լինել փախստականների եւ տեղացիների համար:

-- Հետամուտ լինել նախկինում ստացված դիպլոմների եւ հավաստագրերի նախաձևեր:

-- Տրամադրել ժամանակավոր ծառայություններ, եթե որոշակի տարածքներում համապատասխան հանրային ծառայություններ գոյություն չունեն, միեւնույն ժամանակ՝ ստեղծել եւ ամրապնդել կառավարության կարողությունները՝ հետագայում ինֆուորույն տրամադրել այդպիսի ծառայություններ:

-- Օժանդակել, որպեսզի կենսամիջոցների ստեղծմանն ուղղված համայնֆան են գործողությունները պաշտոնապես նախաձև եւ զբանցվեն համապատասխան պետական եւ մասնավոր հաստատությունների կողմից:

2.3 Պետական իշխանության մարմինների (ծառայությունների) բեռի թեթեւացում

Կառավարության/համայնֆապետարանների հետ ֆննարկել եւ որոշել, թե ինչպես կարելի է տրամադրել լրացուցիչ օժանդակություն՝ ընդլայնելու պետական հաստատությունների կարողությունները եւ բարելավելու ծառայությունների որակը, թեթեւացնելու այն բեռը, որը պետական ծառայությունների վրա կարող է դնել ինտեգրումն այն դեպքերում, երբ դա տեղի է ունենում փախստականների խոշոր կենտրոնացում ունեցող ֆազաբային բնակավայրերում:

-- Կարողությունների ստեղծման նպատակով տրամադրել օժանդակություն իրավաբանական խորհրդատվության, տեղեկատվական կառավարմանն աջակցության, աշխատակազմի հավաքագրման, ՄԱԿ ՓԳՀ-ի կազմակերպած աշխատաժողովներին եւ ուսուցման դասընթացներին պետական ծառայողների ներգրավման միջոցով:

-- Տրամադրել սարքավորումներ եւ նյութական ռեսուրսներ:

-- Տեղական գործընկերների եւ ֆազաբային ծառայողների համար վարել տեղեկատվական հանդիպումներ փախստականների իրավունքների թեմայով՝ ընդլայնելու հանրային ծառայությունների տարածումը դեպի փախստականներ եւ նրանց ընդգրկումը:

-- Կատարել ներդրումներ՝ ուղղված համապետական եւ տեղական մակարդակներում ծառայություններ մատուցողների (լինեն դրանք պետական, թե մասնավոր) կարողությունների ստեղծմանը, որպեսզի ընդլայնվի այդ ծառայությունների տարածումը եւ փախստականների ընդգրկումը, մշակել հատուկ ծառայություններ, ինչպիսիք են լեզուների եւ կոնկրետ

հմտությունների ուսուցումը, գործարարության զարգացումը, ֆինանսական գրագիտությունը, բիզնեսի օժանդակության ծառայությունները, աշխատանքի տեղավորման եւ աշխատության մեխանիզմները, աշխատանք գտնելու նպատակով իրավաբանական օգնությունը եւ փաստաթղթավորման ծառայությունները, եւ մատուցել դրանք ինչպես տեղական հաստատություններին, այնպես էլ փախստականներին:

2.4 Ինտեգրումը տեղական համայնքներում

Ապահովել, որ փախստականներն ընդունվեն տեղական համայնք եւ օգտվեն նույն իրավունքներից: Նպատակը «սոցիալական համախմբվածությունն» ընդլայնելն է՝ օգտագործելով կենսամիջոցների ստեղծման համատեղ ծրագրերը՝ որպես խաղաղ գոյակցության միջոց:

-- Տրամադրել ներածական ուսուցման դասընթացներ եւ անցկացնել տեղեկատվական հանդիպումներ ֆաղափական, տնտեսական եւ սոցիալական միջավայրի թեմայով, ինչպես նաեւ լեզվի ուսուցման դասընթացներ նոր ժամանած փախստականների համար, որպեսզի նրանք կարողանան ճանաչել իրենց ընդունած երկիրը եւ իրենց ֆաղափային միջավայրի առանձնահատկությունները:

-- Ինտեգրմանն օժանդակելու եւ սոցիալական համախմբվածությունն ընդլայնելու նպատակով գնահատել փախստականների եւ ընդունող համայնքի անդամների որակավորման աստիճանը եւ առաջարկել համատեղ ուսուցում, օրինակ՝ ձեռներեցության եւ համակարգչային գրագիտության թեմաներով:

-- Օգնել, որպեսզի փախստական ձեռներեցները կարողանան օգտվել բիզնեսի զարգացման ծառայություններից, ուսուցումից (ներառյալ՝ առցանց, Տեխնոլոգիաների հասանելիության համայնքային կենտրոնների միջոցով՝ այնտեղ, որտեղ դրանք գոյություն ունեն) եւ տեղական գործարար ցանցերում ներգրավումից:

3. Նախնական գնահատում

Իրականացնել կենսապահովման իրավիճակի նախնական գնահատումներ՝ հիմնվելով սոցիալ-տնտեսական չափանիշերի վրա՝ որակյալ տվյալների հիման վրա սահմանելու եւ մշակելու կենսամիջոցների ստեղծմանն ուղղված եւ տեղայնացված ծրագրային միջամտություններ: Նախնական գնահատումներ պետք է իրականացվեն հետևյալի վերաբերյալ. գործող ֆաղափականությունների միջավայրը եւ սոցիալական կամ ֆաղափական գործընթացները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են աշխատանքի եւ կենսամիջոցների ստեղծման այլ հնարավորությունների հասանելիությանը, փախստական բնակչության ներսում գոյություն ունեցող բազմազանությունը՝ նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի, այսինքն՝ տնային տնտեսությունների եւ անհատ տղամարդկանց ու կանանց կողմից գոյատևման նպատակով օգտագործվող կենսապահովման միջոցների եւ ռազմավարությունների առումով, պաշտպանվածությանն առնչվող մարտահրավերները, որոնց փախստականները բախվում են ֆաղափային բնակավայրերում: Հարկ է նաեւ պարզել այն հաստատությունները եւ ծրագրերը, որոնք աջակցում են կամ տեսականորեն կարող են աջակցել ընդունող երկրներում կենսամիջոցների զարգացմանը եւ ստեղծել տնտեսական հնարավորություններ:

Համապարփակ նախնական գնահատումներ իրականացնելու գործնական քայլեր

3.1 Նախնական գնահատման ընդգրկումը որոշելը

Կենսապահովման միջոցների նախնական գնահատումը համապարփակ գործընթաց է, որը ենթադրում է Բազմագործառնության թիմի, փախստականների համայնքի ներկայացուցիչների, ընդունող համայնքի, պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև խնդրին առնչվող կազմակերպությունների, օրինակ՝ ՄԱԿ ՓԳՉ-ի իրականացնող գործընկերների (ԻԳ) և համայնքային կազմակերպությունների (ՀմԿ) մասնակցությունը և ներդրումը:

-- Որոշել, թե արդյոք նախնական գնահատումը պետք է ընդգրկի ե՛լ փախստականներին, ե՛լ նրանց շրջապատող տեղական բնակչությանը. խորհուրդ է տրվում ընդգրկել տեղական համայնքները, քանի որ նրանք տալիս են հուշում այն մասին, թե ինչ կարելի է ակնկալել թիրախային տարածքում:

-- Բացահայտել և սահմանափակել «կենսապահովման գոտիները», որտեղ բնակվում են փախստականների մեծ խմբեր և կիսում համանման հատկանիշեր, կենսամիջոցների ստեղծման ռազմավարություններ և խոցելի կոդներ:

-- Պարզել, թե որ սոցիալ-տնտեսական խմբերի համար են հասանելի այն շուկայական հնարավորությունները, որոնք հատուկ են կենսապահովման տվյալ գոտուն: Վերլուծել, թե արդյոք այս խմբերը բախվում են համանման դժվարությունների, միտումների և սեգմենտային փոփոխությունների:

3.2 Կենսապահովման ֆազաֆային համատեքստի գնահատում

Նախնական այն գործոնների ֆարտեզագրում, որոնք ազդում են կենսապահովման միջոցների և հնարավորությունների վրա: Կենսամիջոցների ստեղծման ռազմավարությունները կենսապահովման իրենց նպատակներին հասնելու համար փախստականների կողմից ձեռնարկվող գործողությունների համակցությունն են: Այն, թե տվյալ տնային տնտեսությունը կենսապահովման ինչպիսի ռազմավարություն կընտրի, կախված է այդ ընտանիքի ռեսուրսներից և այն հանգամանքից, թե որքանով է այդ ռեսուրսների օգտագործումը սահմանափակված ֆազաֆականություններով, հաստատություններով և գործընթացներով (ՔՀԳ-ներ):

-- Վերլուծել կենսապահովման ռեսուրսները և ռազմավարությունները, որոնք օգտագործում են տնային տնտեսությունները՝ ներգրավվելու կենսամիջոցների ստեղծմանն ուղղված գործողություններում: Կենսապահովման ռեսուրսների համախումբը կազմված է ինչպես շոշափելի միջոցներից ու ռեսուրսներից, այնպես էլ ոչ շոշափելի այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են պահանջները և հասանելիությունը. ֆինանսական կապիտալ, մարդկային կապիտալ, բնական կապիտալ, ֆիզիկական կապիտալ և սոցիալական կապիտալ:

-- Վերլուծել գործող ֆազաֆականությունների համատեքստը, իրավական և ինստիտուցիոնալ դաշտը, որը ներառում է ընդունող կառավարության որդեգրած ֆազաֆականությունները, օրենքները, կանոնակարգերը և միջազգային գործիքները, որոնք աջակցում են կենսամիջոցների ստեղծմանը: Վերլուծության ենթարկել աշխատառականները, ծառայությունները և ապրանքները, ֆինանսական և սոցիալական հաստատությունները, տեղական իշխանության մարմինները, զարգացման բնագավառում աշխատող և մարդասիրական կազմակերպությունները, համայնքապետ կազմակերպությունները, ակադեմիական հաստատությունները: Վերլուծել այն, թե որքան խստորեն են կյանքի կոչվում որդեգրված

ֆաղափականությունները, ինչպիսին են հանդուրժողականության մակարդակը և ֆաղափացիական հասարակության վերաբերմունքը:

-- Առանցֆային տեղեկատուների հետ հարցազրույցների միջոցով հավաքել նախնական տեղեկություններ: Տնային տնտեսությունների ռեսուրսների (ինչ սեփականություն ունեն) և կենսամիջոցների ստեղծման ռազմավարությունների (ինչ են անում՝ ապրուստ վաստակելու համար) վերաբերյալ մանրամասները պետք է վերհանվեն պլանավորված ֆոնուս խմբային ֆննարկումների և/կամ հարցումների միջոցով:

-- Վերլուծել ռազմավարությունները՝ հաշվի առնելով այն, որ կենսամիջոցների ստեղծման ռազմավարությունները տղամարդկանց և կանանց կողմից կիրառվում են տարբեր ձևերով, և ռազմավարությունները ժամանակի ընթացքում փոխվում են:

-- Վերլուծել փախստականների ընթացիկ և պլանավորված տնտեսական գործունեությունը. ինֆնագրադրվածություն կամ միկրոձեռնարկություն, ժամանակավոր (ուչ մշտական) աշխատանք, մշտական աշխատանք:

-- Բացահայտել պաշտպանվածությանն առնչվող դժվարությունները, որոնք ծագում են որոշակի ֆաղափային միջավայրում կենսամիջոցների ստեղծման ռազմավարություններից, ինչպես նաև՝ այնպիսի անհատների ու խմբերի առանձնահատուկ կարիքները, ինչպիսիք են ռիսկի ենթակա կանայք (օրինակ՝ նախկինում փոխհատուցման դիմաց սեռական ծառայություններ սրամադրածներ), մարդկանց թրաֆիկինգից տուժածներ, սեռական ու գեղդերահեն բուության (ՍԳՀԲ) ենթարկվածներ, ծերեր, հաճմանդամություն ունեցող անձինք:

3.3 Առցիալ-տնտեսական խմբերի որոշումը

Վերլուծել փախստական ընտանիքների կենսապահովման միջոցների և կենսամիջոցների ստեղծման ռազմավարությունների վերաբերյալ տեղեկությունները՝ առցիալ-տնտեսական մակարդակը որոշելու նպատակով: Նախնական գնահատման ենթարկված բնակչության ներսում հատկորոշել հիմնական առցիալ-տնտեսական խմբերը՝ որպես վերլուծության հիմնական միավոր օգտագործելով տնային տնտեսությունը: Կենսապահովման միջոցների նախնական գնահատման նպատակներից էլնելով՝ թիրախային բնակչությունն ըստ հարստության մակարդակի պետք է բաժանվի հետևյալ խմբերի.

-- **Մայրահեղ աղքատ կամ անօգնական անհատներ և տնային տնտեսություններ.** անձինք, ովքեր եկամտի որեւէ աղբյուր չունեն կամ վայելում են չափազանց սահմանափակ առցիալական աջակցություն: Նման խմբերը սովորաբար ընդգրկում են ծերերին, կամ՝ հիվանդ կամ հաճմանդամություն ունեցող անհատների, որոնք օգտվում են նվազ առցիալական/ընտանեկան աջակցությունից:

-- **Տնտեսապես ակտիվ աղքատ տնային տնտեսություններ.** հիմնական եկամուտը ստացվում է աշխատուժի վաճառքից, ընտանիքի ռեսուրսները սակավ են, տնային տնտեսության՝ տնտեսապես ակտիվ անդամների ֆննակի նվազում, ծանր ժամանակահատվածներին հարմարվելու երկարաժամկետ մեխանիզմների բացակայություն:

-- **Միջին եկամուտ ունեցող տնային տնտեսություններ.** եկամտի բազմազան եւ որոշ չափով մշտական աղբյուրներ, պարտքով փող վերցնելու եւ փոքր գումարներ պարտքով տալու կարողություն, տնօրինում են կամ կարող են օգտվել արտադրական միջոցներից՝ սարքավորումներից եւ հմտություններից, նրանց մի մասը ստանում է մասնավոր սրահափերտներ:

-- **Ունեւոր տնային տնտեսություններ.** այս ընտանիքներն ունակ են գումար սրահադրել համայնքի այլ անդամների, ունեն ավելի բարձր հասարակական հեղինակություն, աշխատանքով են ապահովում համայնքի այլ անդամների, տիրապետում են ընտանեկան եւ արտադրական ռեսուրսների եւ ունեն հմտություններ ու ընդարձակ սոցիալական եւ տնտեսական կապեր իրենց հայրենի համայնքի/բնակավայրի սահմաններից դուրս:

-- **Այլ խմբեր,** որոնք չեն համապատասխանում վերը նշված դասակարգումներին, կարող են ուշադրություն գրավել, ներառյալ՝ այնպիսի տնային տնտեսությունները, որոնք ծայրահեղ հարուստ են՝ համեմատած ունեւորների հետ:

Նկարի գրառումը. *Հարավային Աֆրիկա/ Լանգտոն Սանյանգան ապաստան որոնող է Զիմբաբվեից: Նա ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ եւ մեր գործընկերոջ՝ Քեյթիթաունի փախստականների կենտրոնի (ՔՓԿ) միջոցով ավարտել է ֆուրբեստի ծառայություններ մատուցելու դասընթաց: Շահավետ պայմաններով աշխատանքի անցնելով՝ Քեյթիթաունի հյուրանոցներից մեկում, Սանյանգան ցուցադրում է իր արհեստը՝ խմիչժ մատուցելով ՔՓԿ-ի ինֆրապայլինման հարցերով պատասխանատու Ցալադի Քոքսիեսին: / ՄԱԿ ՓԳՀ / Փ. Ռուլաե*

4. Հասցեականություն

Կենսապահովման միջոցների նախնական գնահատման ավարտից հետո հաջորդ փայլը ներգրավվելն է ռազմավարական պլանավորման գործընթացում, կրկին՝ գործընկերների եւ շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ խորհրդակցություններում եւ համակարգման գործընթացում: Կենսամիջոցների ապահովմանն ուղղված ծրագրային միջամտությունները պետք է փորձեն գործել խոչընդոտող նորմերի շուրջ եւ գտնեն ուղիներ՝ գործելու գոյություն ունեցող սահմանափակումների պայմաններում, որպեսզի հնարավոր լինի շարունակել փախստականներին (եւ, հնարավորության դեպքում, ընդունող համայնքներին) աջակցելը: Ընտրված նպատակային խմբերի համար՝ նախնական գնահատման հիման վրա կարելի է իրականացնել պատշաճ միջամտությունների բանիմաց ընտրություն՝ ըստ պլանավորված հաջորդականության, որպեսզի հնարավոր լինի նպաստել բազմաժանակ խնդիրների լուծմանը:

Գործնական փայլեր հասցեականության սահմանման նպատակով

4.1 Նախնական գնահատման արդյունքում ստացված առաջարկությունների որոշարկում

Պարզել եւ հասկանալ մարդկանց կողմից որդեգրված ռազմավարությունները՝ գործցնելու համար դրական կողմերը ու կանխարգելելու եւ նվազեցնելու ֆաղափականություններով, հաստատություններով եւ գործընթացներով պայմանավորված սահմանափակումները:

-- Հստ հարստության աստիճանի որոշված յուրաքանչյուր խմբի դեպքում, տղամարդկանց, կանանց եւ երիտասարդների վերաբերյալ որոշակիացնել կոնկրետ ուժեղ կողմերը/ կարողությունները եւ թույլ կողմերը/ կարիքները: Պարզել առկա բացերը եւ դրանք չեզոքացնելու միջոցները՝ նպատակային խմբերին համապատասխան:

-- Զարգացնել գոյություն ունեցող հնարավորությունները եւ դիմագրավել արտաքին սպառնալիքներին. դիմագրավել «արտաքին» մարտահրավերներին (կապված ֆադաֆականությունների, հաստատությունների եւ գործընթացների հետ)՝ ֆադաֆականությունների վրա ազդեցության միջոցով ստեղծելու առավել նպաստավոր ֆադաֆական, սոցիալական եւ տնտեսական միջավայր:

-- Զարգացնել գոյություն ունեցող ուժեղ կողմերը եւ դիմագրավել ներքին թույլ կողմերը. դիմագրավել «ներքին» թույլ կողմերը (կապված տվյալ եկամտային խմբում գտնվող սնային տնտեսությունների կամ անհատների կենսապահովման ռեսուրսների հետ)՝ ստեղծելու կամ բազմապատկելու ռեսուրսները՝ միեւնույն ժամանակ օգնելով բավարարել հիմնական կարիքները:

-- Օժանդակել այն ծառայությունների մատուցմանը, որոնք բացահայտվել են որպես իրական կարիքներ ինչպես փախստականների, այնպես էլ տեղական համայնքների կողմից եւ նշանակալի մարտահրավեր չեն ներկայացնում գոյություն ունեցող ֆադաֆական, մշակութային եւ գեղդերային նորմերին:

4.2 Ռազմավարական նպատակների սահմանում

Համապարփակ ռազմավարական ծրագիրը սովորաբար ձգտում է հասնել կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ նպատակների՝ մի շարք գործողությունների իրականացման հանապարհով:

-- Իրականացնել գործողությունների մի ընդարձակ համախումբ. դրանց մի մասը կլինի նպատակային, իսկ մեկ այլ մասը կաջակցի բոլոր փախստականներին՝ անկախ նրանց կարողություններից: Շահառուները կընտրվեն սոցիալ-տնտեսական հարցման արդյունքում որոշված եկամտային խմբերի հիման վրա:

-- Կենսամիջոցների տրամադրմանն ուղղված ծրագրային միջամտություններն ուղղակի եւ անհապաղ ազդեցություն ունեն մարդկանց սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա՝ նպատակ ունենալով նվազեցնել նրանց խոցելիությունը, օրինակ՝ դրամաճնորհների տեսքով օժանդակության, բնակարանային պայմանների սուբսիդավորման եւ հիմնական ծառայությունների մատուցման միջոցով:

-- Կենսամիջոցների պաշտպանությանն ուղղված ծրագրային միջամտություններն ունեն ուղղակի, կարճաժամկետից մինչև միջնաժամկետ ազդեցություն մարդկանց սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա, օրինակ՝ մի կրոնաէկոնոմիկա-տիրության զարգացման նպատակով տրվող դրամաճնորհները, անհատական հմտությունների զարգացման դասընթացները, նպատակային արհեստագործական կամ գործարարության ուսուցումը, աշխատանքի տեղավորումը:

-- Կենսամիջոցների խթանմանն ուղղված ծրագրային միջամտություններն ունեն անուղղակի, միջնաժամկետից մինչև երկարաժամկետ ազդեցություն մարդկանց սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա, օրինակ՝ շահերի պաշտպանությունը,

կարողությունների ստեղծումը և ուսուցում տրամադրող հաստատություններում կատարվող ներդրումները, ֆորմալ ֆինանսական ծառայությունների հասանելիությունը, մասնագիտական զարգացման հարցերով խորհրդատվությունը և բիզնեսին աջակցության ծառայությունները:

-- Տե՛ս «Կենսամիջոցների ստեղծման նպատակով առաջարկվող գործողությունների ցանկ» **«Կենսամիջոցների ստեղծմանն ուղղված գործողությունների ընտրությունը և հասցեավորումը»** հավելվածը:

5. Ինֆնապալինում

Ինֆնապալինումը (ինֆնաբավությունը) անհատի, տնային տնտեսության կամ համայնքի սոցիալական և տնտեսական կարողությունն է՝ շարունակաբար և արժանապատվորեն բավարարելու իր հիմնական կարիքները (ներառյալ՝ պաշտպանվածության, սննդի, ջրի, կացարանի, անձնական ապահովության, առողջության և կրթության): Ինֆնապալինումը, որպես ծրագրային մոտեցում, վերաբերում է ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձանց կենսապահովման միջոցների զարգացմանը և ամրապնդմանը և նրանց խոցելիության ու երկարաժամկետ հատվածում մարդասիրական օգնությանը կամ արտաֆին օժանդակությանն ապալինելու աստիճանի նվազեցմանը: Կենսամիջոցների ստեղծմանն ուղղված ծրագրերը պետք է աջակցեն փախստականներին՝ դառնալ ինֆնապալին: Կանխիկ գումարի/ սննդի/ վարձավճարի տեսքով օժանդակությունը պետք է լինի կարճատև, տրվի որոշակի պայմանների բավարարման դեպքում և աստիճանաբար տանի դեպի ինֆնապալինմանն ուղղված գործողությունների՝ որպես երկարաժամկետ զարգացման մի մաս:

Ինֆնապալինմանն ուղղված գործողություններին աջակցող գործնական քայլեր

5.1 Աջակցության մի մակարդակից մյուսին անցնելը՝ ժամանակի ընթացքում մարդկանց կարողությունների և կարիքների ձեռնարկումնը գույքահեռ

Կենսամիջոցների ստեղծմանն ուղղված ծրագրերի նկատմամբ որդեգրել «ավարտման» մոտեցում (Քայլեր 1-ից 3), որը հիմնված կլինի յուրաքանչյուր սոցիալ-տնտեսական խմբի համար նախնական գնահատման ընթացքում վերահանված կարողությունների և աջակցության կարիքների վրա: Աստիճանաբար նվազեցնել օժանդակության և կենսամիջոցների ստեղծմանն ուղղված աջակցության կարիք ունեցողների քանակը՝ տեղական լուծումների հասնելու միջոցով:

-- Ծախերի և սոցիալական պաշտպանությունը շարունակական գործողություններ են, որոնք հիմն են ապահովում աջակցության մյուս բոլոր տեսակների համար: Մինչ ծախերի պաշտպանությանն ուղղված գործողությունները ժամանակի ընթացքում կարող են ընդլայնվել, ակնկալվում է, որ դրամաճնորհների տեսքով օժանդակության ծավալը պետք է աստիճանաբար կրճատվի:

-- Քայլ 1-ը միավորում է դրամաճնորհների վրա հիմնված, կարողությունների ստեղծմանն ուղղված աջակցության մեծ մասը, որը արամադրվում է անենաչափոր ընտանիքներին և անհատներին:

-- Քայլ 2-ի նպատակակետը տնտեսապես ակտիվ անհատներն են, ովքեր արդեն իսկ ձեռք են բերել զգալի հմտություններ (կամ ովքեր զարգացրել են արտադրական հմտություններ և կուտակել են նախկին աշխատանքային փորձ): Նորմալ

պայմաններում այս տնային տնտեսություններն աստիճանաբար պետք է դադարեին ստանալ դրամաճնդանային օժանդակություն, չնայած պետք է պահպանեին կրթությունից կամ առողջապահությունից անվճար կամ սուբսիդավորված կարգով օգտվելու իրենց իրավունքը: Նրանք կօգտվեն փոքր ձեռնարկությունների զարգացման նպատակով տրամադրվող աջակցությունից եւ արդյունքում գործով կապահովեն այլ անձանց, եւ/կամ կօգտվեն աշխատանքի թույլտվություն ստանալու հարցում տրամադրվող օգնությունից՝ օգտագործելու գոյություն ունեցող հմտությունները եւ փորձը տեղական աշխատաշուկայում:

-- Քայլ 3-ն ուղղված է տնտեսապես ակտիվ բնակչությանը, «ունենոր» անհատներին, ովքեր ցուցադրում են ընդունող համայնքում տնտեսական եւ սոցիալական հաջող ինտեգրման մեծ կարողություն, սակայն կարիք ունեն սահմանափակ տեղադրյալ աջակցության, որպեսզի դառնան լիարժեք ինքնապավեն (ինքնաբավ):

5.2 Խոցելիության մակարդակի նվազեցում

Աստիճանաբար, փուլ առ փուլ կրճատել կենսամիջոցների տրամադրմանն ուղղված կարճաժամկետ միջոցառումները, որոնք ավելի ծախսատար են, քան կայուն կենսապահովման խթանմանն ուղղված՝ միջնաժամկետից մինչև երկարաժամկետ միջոցառումները:

-- Ստեղծել կարողություններ կենսամիջոցների տրամադրման եւ կենսամիջոցների պաշտպանության միջոցառումների միջոցով՝ ուղղված կենսամիջոցների առավել երկարաժամկետ խթանմանը:

-- Աստիճանաբար կրճատել ՄԱԿ ՓԳՀ-ի ուղղակի ներդրումները կենսամիջոցների խթանմանն ուղղված միջոցառումներում, որպեսզի ծրագրերը հնարավոր լինի հանձնել զարգացման բնագավառի կամ պետական իշխանության հաստատություններին:

-- Նպատակային ծրագրային միջամտությունների միջոցով աջակցել ձեռներեցներին եւ հմտություններ ունեցող փախստականներին:

-- Գնահատել նյութերի եւ բռնության ենթարկվելու ռիսկերը, որոնք կարող են կապված լինել կենսամիջոցների ապահովմանն ուղղված որեւէ ռազմավարության հետ (օրինակ՝ տեղափոխվելու առնչվող անվտանգությունը, գիշերային աշխատանքը եւ կառուցվածք): Կենսապահովմանն աջակցող միջամտությունը, որն ուղղված է տեղահանված կանանց, պետք է հաշվի առնի եւ ներմուծի պաշտպանության այնպիսի տարրեր, ինչպիսիք են խառը սեռային կազմ ունեցող ֆինանսական խմբերը, որպեսզի ապահովվի իգական սեռին պատկանող մասնակիցների խոցելիության եւ սեռական ու գեղեցիկ հեն բռնության ենթարկվելու աստիճանի նվազեցումը:

-- Մոնիտորինգի ենթարկել ցուցիչները (ինդիկատորներ) եւ վերհանել այնպիսի անհատներ/ տնային տնտեսությունների ընտրության չափանիշերը, որոնք պահանջում են երկարաժամկետ սոցիալական օժանդակություն: Այդ անհատներ/ տնային տնտեսությունների կարողությունը՝ դառնալ կենսամիջոցների տրամադրման ծրագրի «չբջանավարտ», կլինի ցածր մակարդակի:

-- Հատկորոշել այն տնային տնտեսությունները և անհատներին, որոնք ենթակա են բարձր ռիսկի և կարիքների նախնական գնահատման ընթացքում բավարարել են սոցիալական օժանդակություն ստանալու պայմանները, օժանդակել նրանց՝ սոցիալական ապահովության ազգային համակարգերում ինտեգրվելու նպատակով (այն դեպքերում, երբ դա կիրառելի է):

-- Նախաձեռնել բաղաձայնությունների շուրջ երկխոսություն կառավարությունների հետ՝ ազդեցություն գործելու սահմանափակումներ ամրագրող օրենքների և հրահանգների ընդունման վրա և օժանդակելու ռիսկայնության բարձր աստիճան ունեցող փախստականների ընտանիքներին՝ մինչև դրական փոփոխությունները նյութականանան:

6. Գործընկերություններ

Զնայած համապարփակ ռազմավարության պլանավորման գործում ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է ստանձնել առաջատարի դեր, իրականացման փուլին հասնելուց հետո այն սովորաբար նվազում է: Որոշ գործողություններ կիրականացվեն տեղական կազմակերպությունների, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների կամ պետական իշխանության մարմինների կողմից՝ առանց ՄԱԿ ՓԳՀ-ի ուղղակի ներդրումների: Այն գործողությունները, որոնց իրականացումը չափազանց տեղին է, սակայն այլոց կողմից դրանց իրականացման համար չկան միջոցներ, անմիջապես հայտնվում են ՄԱԿ ՓԳՀ-ի պարտավորությունների ներքո և պահանջում են գործընկերությունների ստեղծում ինչպես իրականացման, այնպես էլ գործառնությունների համար: Անհրաժեշտ է, որ ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնի իր համատեղ աշխատանքը կառավարությունների և ազգային իշխանությունների հետ և գրավի զարգացման հարցերով զբաղվող գործընկերների ուժադրությունը՝ ապահովելու սահուն անցում արտակարգ պատահարներին արձագանքումից և օգնությունից դեպի հարակալուն զարգացում:

Գործնական քայլեր գործընկերությունների ստեղծման, ամրապնդման և համակարգման նպատակով

6.1 Շահագրգիռ կողմերի վերլուծության անցկացում և գործընկերների դերերի սահմանում

Ճանաչել մարդասիրական կազմակերպությունների (կարեաժամկետ) և բիզնես միավորների (երկարաժամկետ) առանձնակի նպատակները և modus operandi-ն (աշխատակարգը), հարգել այս կառույցների՝ միմյանցից տարբերվող մանդատները, դերերը և մոտեցումները՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ որոշ ծրագրային միջամտությունների իրականացումը կհանձնվի հաստատված դրական փորձ և որակավորում ունեցող այդ հաստատություններին և կազմակերպություններին:

-- Կառավարություններ/ պետական իշխանության մարմիններ (նախարարություններ, համայնֆապետարաններ, տեղական իշխանության մարմիններ, և այլն). բաղաձայնությունների մեկնման հարցում ուղղորդում և ընդհանուր համակարգում, որակավորման փնտրում և փաստաթղթավորում, ուսուցում, օժանդակություն և վերահսկողություն, համակարգում:

-- Կենսապահովման հարցերով զբաղվող հաստատություններ (պետական և մասնավոր). փախստականների համար հասանելիության ապահովում, փախստականների ներգրավում, որակյալ ծառայությունների մատուցում ապահով և ուսումնառուի համար նպաստավոր միջավայրում, ենթակառուցվածքներ և սարքավորումներ:

-- Միջպետական գործակալություններ (ԱՄՆ ՄՁԳ, Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարություն (ՄԹ ՄՁԼ/DFID), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA), եւ այլն). երկվորյակ համաձայնագրերի ներքո կառավարություններին հատկացվող ֆինանսական միջոցներ՝ ուղղված կենսամիջոցների ստեղծմանը, ծրագրային օժանդակություն ՄԱԿ ՓԳՀ-ին եւ ՈԿԿ հանդիսացող գործընկերներին, մասնակցություն ֆաղափականությունների շուրջ երկխոսությանը, վախժատականների ինտեգրում պետական համակարգում, կրթաթոշակների տրամադրում:

-- ՄԱԿ եւ մասնագիտացած գործակալություններ (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, ԱՄԿ, այլ). շահերի պաշտպանություն, կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունների ֆինանսավորում, օժանդակություն ուսուցման միջոցով, ներդրում ֆաղափականությունների շուրջ երկխոսությանը, վախժատականների ինտեգրում երկրի պետական համակարգում, կարողությունների ստեղծման միջոցով աջակցություն համապատասխան նախարարություններին եւ հաստատություններին:

-- Համայնային կազմակերպություններ (միավորումներ, ցանցեր, եւ այլն). կենսամիջոցների ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացում, մասնակցություն նախնական գնահատումներին, պլանավորմանը, իրականացմանը եւ մոնիտորինգին (մշտադիտարկմանը), համայնների ակտիվացում եւ իրազեկության մակարդակի բարձրացում, վախժատականների եւ տեղական համայնքների մասնակցությամբ համատեղ գործողությունների կազմակերպում:

-- Մասնավոր հատված (ընկերություններ, հիմնադրամներ, ուսուցում տրամադրող հաստատություններ, եւ այլն). վախժատականների ներառում կենսամիջոցների ապահովմանն ուղղված՝ ընթացիկ կամ պլանավորվող ծրագրերում, աջակցություն վախժատականների կողմից փոքր ձեռնարկությունների ստեղծմանը եւ նոր ստեղծվող բիզնեսներին, ուսուցման եւ աշխատության հնարավորությունների տրամադրում, ուսումնական տեղերի տրամադրում տեխնիկական ուսումնարաններում, տեղավորում մասնագիտական կրթության հաստատություններում եւ մասնավոր ձեռնարկություններում, ֆինանսավորման եւ ոչ դրամական տեսքով նվիրատվությունների տրամադրում, միկրոֆինանսավորման եւ վարկավորման մեխանիզմներ, կրթաթոշակների տրամադրում հիմնադրամների եւ տեղական/ միջազգային ընկերությունների միջոցով, համաձայնություն մասնավոր ընկերությունների հետ՝ վախժատականների համար աշխատատեղեր առանձնացնելու մասին, գործարար ասոցիացիաների, ուսուցում տրամադրող մասնավոր հաստատությունների եւ ցանցերի հետ գործընկերային հարաբերությունների զարգացում:

-- Փախժատականների եւ տեղական համայնքներ. մասնակցություն ծրագրերի պլանավորմանը եւ իրականացմանը, ներգրավվածություն շահերի պաշտպանությանը եւ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործողություններում, մասնակցություն ծրագրերում, օրինակ՝ ֆինանսական միջոցների եւ նյութական/ ոչ դրամային ներդրումների տեսքով, տեղական համայնքների հետ համատեղ գործողություններ/ նախագծերի կազմակերպում:

6.2 Փախժատականների համար կենսամիջոցների ապահովմանն ուղղված ծառայությունների համակարգում

Սերտ կապեր հաստատել համապատասխան նախարարությունների եւ այլ համապետական ու տեղական իշխանությունների, գործընկեր կազմակերպությունների եւ շահագրգիռ այլ կողմերի հետ եւ գործադրել համակարգմանը նպաստող ջանքեր՝

նպատակ ունենալով հասնել շահերի համատեղ պատշաճության եւ ծրագրերի պլանավորման, որպեսզի հնարավոր լինի փախստականների համար կենսամիջոցների ապահովմանն ուղղված ծառայություններն ինտեգրել պետական համակարգում:

-- Եթե գոյություն չունեն համակարգման հարմար մեխանիզմներ, ստեղծել Կենսամիջոցների հարցերով համակարգող խումբ, որում կընդգրկվեն ՄԱԿ ՓԳՀ-ի, ՈԿԿ հանդիսացող իրականացնող գործընկերների, կառավարության/ պետական հաստատությունների եւ փախստականների/ տեղական համայնքների ներկայացուցիչներ: Համակարգող խումբը կօգնի իրականացնել առանձին կարենություն ունեցող այնպիսի աշխատանքներ, ինչպիսին են աջակցությունը տեղեկությունների եւ ֆաղած դասերի փոխանակմանը, ապահովելը, որ ծրագրերի նախագծումը, պլանավորումը եւ իրականացումը լինեն համահունչ, աջակցությունը շահերի պատշաճությանը, ֆոնդերի հավաքագրմանը, մոնիտորինգին եւ գնահատմանը:

-- Կառավարության, դոնոր կազմակերպությունների եւ ՄԱԿ-ի մակարդակներում ընդլայնված համակարգման մեխանիզմների բացահայտում՝ նպատակ ունենալով ապահովել մասնակցություն եւ շահերի պատշաճություն, որպեսզի ֆաղաբանակ փախստականներին տրամադրվեն կենսամիջոցների ապահովման հնարավորություններ:

-- Օգտագործել համակարգման այս ժողովները որպես պլատֆորմ՝ խթանելու հասանելիության ընդլայնումը եւ ծառայությունների բարելավումը, որոնք նաեւ կնպաստեն գործող ֆաղաբանությունների կատարելագործմանը եւ կենսամիջոցների ապահովման այնպիսի խոչընդոտների ինստիտուցիոնալ գործոնների մեղմմանը, ինչպիսիք են աղքատությանն առնչվող ընդհանուր հիմնախնդիրները (մշտական եկամտի բացակայություն, պարենային անապահովություն, թերնուցում, բնակարանային անբավարար պայմաններ, վատբարացած առողջական վիճակ, կրթական հնարավորությունների պակաս):

-- Ընդունել կառավարության եւ համապատասխան նախարարությունների ու հաստատությունների առաջնությունը եւ մասնակցել ազգային, տեղական եւ համայնքային մակարդակներում կազմակերպվող հանդիպումներին, որոնց ընթացքում ֆինանսավում են ֆաղաբանակ աղքատ բնակչության, ներառյալ՝ փախստականների կենսաապահովման կարիքները:

-- Որդեգրել բազմագործառության թիմի մոտեցում կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործունեության պլանավորմանը եւ իրականացմանը, օրինակ՝ գործողությունները սերտորեն համակարգելով առողջապահական, կրթական, համայնքային ծառայությունների եւ կենսամիջոցների ապահովման հարցերով զբաղվող աշխատակազմի հետ, եթե դա հնարավոր է:

-- Միկրոֆինանսավորման ոլորտում օգտվել հետեւյալ ձեռնարկից. «Ներդրումներ հանուն լուծումներ գտնելու. Գործնական ուղեցույց ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատանքներում միկրոֆինանսավորման կիրառման վերաբերյալ» [*Investing in Solutions: A Practical Guide for the Use of Microfinance in UNHCR Operations*], ՄԱԿ ՓԳՀ, 2011 թվական:

6.3 Սերտ համակարգում ՄԱԿ-ի եւ այլ միջազգային գործակալությունների հետ

Օգտվել հնարավորություններից, որոնք ապահովվում են ազգային համակարգման եւ տվյալ երկրում ՄԱԿ-ի թիմի համակարգման մեխանիզմների եւ գործընթացների միջոցով:

-- Բացահայտել ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԿԶԱՄ) և Դիմումների համախմբված գործընթացի (ԴՀԳ) [Consolidated Appeals Process] միջոցով սրամադրվող՝ կենսամիջոցների ապահովման հնարավորությունները:

-- Սերտ կապեր հաստատել Աժխտանքի միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի այլ գործակալությունների հետ, որոնք ներգրավված են կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողություններում և ուրվագծել համագործակցության ուղարտները:

-- Բացահայտել կենսամիջոցների ապահովման հնարավորությունները, որոնք առկա են ադատության հաղթահարման ազգային ռազմավարական ծրագրերում (ԱՀՌԾ), որոնց աջակցում են Համաժխտարհային բանկը, Ասիական զարգացման բանկը, Աֆրիկյան զարգացման բանկը և միջպետական գործակալությունները:

6.4 Գործառնություններով զբաղվող և իրականացման համար պատասխանատու գործընկերների ներգրավում՝ ֆադախին միջավայրում կենսամիջոցների ապահովման ծրագրի ղեկավարման նպատակով

Պարզել գործընկերների, որոնք կօժանդակեն ֆադախին բնակավայրերում կենսամիջոցների ապահովման ծրագրերի իրականացմանը, ստորագրել համագործակցության պայմանագրեր:

-- Լրացուցիչ համաձայնագրում սահմանել իրականացնող գործընկերոջ դերը և պարտավորությունները: Դրանք կարող են ներառել հետևյալը.

- Մշակել և իրականացնել հաղորդակցության և տեղեկատվության ռազմավարություն՝ խթանելու աժխտանքի հասանելիության և կենսաապահովման միջոցների զարգացման կարեւորությունը, որպեսզի հնարավոր լինի բարելավել շահերի պաշտպանությունը և համակարգումը շահագրգիռ կողմերի միջև:
- Օժանդակել փախստականներին՝ օգտվելու գոյություն ունեցող ծառայություններից, օրինակ՝ շահերի պաշտպանության, ֆինանսական և նյութական աջակցության, տեղական հաստատությունների և ծառայությունների սրամադրողների հետ համակարգման, համայնքների ներգրավման և մոբիլիզացման, ուսուցման տեսքով աջակցության միջոցով:
- Բարելավել փախստականներին հասանելի ծառայությունների որակը՝ ֆինանսական ներդրումների, սարքավորումների, նյութական միջոցների սրամադրման կամ ուսուցման ճանապարհով պետական հաստատություններին աջակցելու միջոցով: Այս ներդրումները պետք է կարգավորվեն համապատասխան հաստատության հետ եռակողմ պայմանագրային հարաբերությունների հաստատմամբ, որը կամրագրի պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր գործընկերների ակնկալիքները և պարտավորությունները:
- Մշտադիտարկման ենթարկել պետական և մասնավոր ծառայությունների որակը՝ օգտագործելով ՄԱԿ ՓԳՀ-ի Արդյունահան կառավարման գործիքները:

-- Հատկորոշել և զարգացնել աժխտունակ գործընկերային հարաբերություններ այնպիսի կառույցների և հաստատությունների հետ, որոնք ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձանց կարող են սրամադրել ծառայություններ իրենց սեփական պայմաններով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ լրացուցիչ ֆորմալ համաձայնագրից դուրս: Սա ՄԱԿ

ՓԳՀ-ին թողնում է այլ հնարավորություններ՝ սեփական ֆինանսական միջոցները ներդնել գործողություններում, որոնք հավասարապես անհրաժեշտ են, սակայն որոնց դեպքում կարնաժամկետից երկարաժամկետ հատվածներում չկան ծառայություն մատուցողներ:

7. Մասնակցություն

Ներգրավել ինչպես տեղական, այնպես էլ փախստականների համայնքները ծրագրերի պլանավորման, իրականացման եւ մոնիտորինգային բոլոր աշխատանքներում: Ընդլայնել շփումները փախստականների համայնքների հետ եւ կանոնավոր կերպով հաղորդակցվել, կազմակերպել տեղեկությունների տարածման գործողություններ եւ փախստականներին իրազեկել իրենց կենսապահովմանն օժանդակող տարբերակների եւ դրանց չափանիշերին բավարարելու պայմանների վերաբերյալ:

Գործնական քայլեր համայնքային մասնակցություն ապահովելու նպատակով

7.1 Համայնքի ներգրավում եւ համայնքի ընդհանուր մասնակցության ակտիվացում

Խթանել փախստականների մասնակցությունը կենսամիջոցների ապահովման հարցում առկա մարտահրավերների եւ կարիքների գնահատմանը, կենսապահովման վրա ազդեցություն ունեցող ներքին եւ արտաքին գործոնների վերլուծությանը:

- Բացահայտել տեղերում առկա ֆինանսական, նյութական եւ մարդկային ռեսուրսները:
- Վերլուծել փախստականների եւ տեղական համայնքների միջև գոյություն ունեցող եւ փոփոխվող հարաբերությունները:
- Գնահատել համայնքի ներսում իշխանություն եւ հեղինակություն ունենալու դիմամիկան, ներառյալ՝ տարբեր լեզվական խմբերի միջև հարաբերությունները, եւ բոլոր այն խմբերը, որոնք կարող են հայտնվել դուրսնադրված վիճակում (փոքրամասնություններ, գեղդեր, եւ այլն):
- Վերհանել անվտանգությանն առնչվող խնդիրները, մտահոգությունները եւ սպառնալիքները, պարզել ապահով եւ հասանելի աշխատատեղերը եւ ուսուցման վայրերը:
- Վերլուծել պաշտպանությանն առնչվող ռիսկերը (ինչպիսիք են խտրականությունը, հետապնդումները, շահագործումը եւ գեղդերահեն բռնությունը) նվազեցնելու ուղիները՝ կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունների համատեքստում:

7.2 Կենսամիջոցների ապահովմանն ուղղված ծառայությունների մատուցմանը փախստականների մասնակցության խթանում

Հետամուտ լինել եւ օժանդակել փախստականների ներգրավմանը կենսամիջոցների ապահովմանն ուղղված նախագծերում՝ տարբեր գործառույթներով:

- Շահերի պաշտպանության գործողությունների միջոցով խթանել փախստականների արտադրողական եւ ստեղծագործական ներուժը, նրանց հմտությունները եւ տալանդները:

-- Խթանել երիտասարդների լիարժեք մասնակցությունը կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողություններին: Նրանք ոչ միայն լսելի լինելու իրավունք ունեն այն հարցերի շուրջ, որոնք ազդեցություն ունեն իրենց կյանքի վրա, այլև պետք է հրավիրվեն ակտիվորեն մասնակցելու կենսամիջոցների ստեղծմանն ուղղված ծրագրերի եւ նախագծերի նախնական գնահատմանը, պլանավորմանը եւ իրականացմանը: Խթախուսել նրանց կարողությունը՝ նախաձեռնել դրական փոփոխություններ եւ դառնալ զարգացման ազդակներ:

-- Ամրապնդել իրենց համայնքներում փախստականների կենսապահովումը խթանելու գործում կամավորների դերը եւ նրանց ակտիվ մասնակցությունը տեղական կոմիտեներում կամ այլ խորհրդակցական մարմիններում, ինչպիսիք են համայնքային/ թաղային զարգացման կոմիտեները:

-- Հետամուտ լինել առաջադեմ օրենսդրության ընդունմանը, որը փախստականներին թույլ կտա աշխատել, փախստական մասնագետներին օգնել աշխատանքի անցնել պետական կառավարման մարմիններում, տեղական հաստատություններում եւ հմտությունների զարգացման/ մասնագիտական կրթության ուսումնական կենտրոններում եւ այլ բնագավառներում, օրինակ՝ կրթություն, առողջապահություն:

7.3 Աջակցություն փախստականների խմբերի եւ կազմակերպությունների ներկայացվածությանը

Պատասխանել եւ օժանդակել փախստականների խմբերի եւ կազմակերպությունների կարողությունների ստեղծմանը:

-- Մեծացնել փախստականների ներկայացուցչական խմբերի, ցանցերի, սոցիալացիաների եւ համայնքային կազմակերպությունների (ՀՆԿ) արդյունավետությունը եւ արտադրողականությունը՝ կարողությունների զարգացման նպատակային գործողությունների միջոցով: Համայնքահեն ֆինանսավորման մեխանիզմների միջոցով օգտագործել ՀՆԿ-ների առաջադեմ լուծումները («նուս-հաու»), որպեսզի փախստականները հնարավորություն ստանան օգտվել կանխիկ ֆինանսական միջոցներից:

-- Ապահովել համայնքային մասնակցություն՝ կենսապահովման տեղական խմբերում, կոմիտեներում եւ սոցիալացիաներում փախստականների ներգրավման միջոցով՝ որպես կարողությունների ստեղծման եւ գործունե ուղղվածության մի մաս: Այն դեպքերում, երբ գոյություն ունեն իրավական սահմանափակումներ, բանակցել «դիտորդի կարգավիճակի» շուրջ:

-- Շարունակել փախստականների ընկալունակության բարձրացումը կենսամիջոցների ստեղծմանն ուղղված գործողություններում նրանց մասնակցության եւ ներկայացվածության կարելուության վերաբերյալ՝ որպես ներդրում ապագայում ինքնապավինում եւ տեւական լուծումներ ապահովելու գործում:

8. Մոնիտորինգ եւ գնահատում

Պարբերաբար մոնիտորինգի ենթարկել եւ գնահատել ծրագրի նպատակներին եւ ակնկալվող արդյունքներին հասնելու ուղղությամբ առաջընթացը՝ նկատի ունենալով աստիճանական հրաժարումը ուղղակի աջակցությունից, ուղղվածության եւ մոտեցման անհրաժեշտ փոփոխությունը, ինչպես նաեւ նշվածից բխող՝ ռեսուրսների նկատմամբ պահանջները: Գործառնական համատեքստը, այն է՝ փախստական բնակչության եւ արտաքին գործոնների սոցիալ-տնտեսական

բնութագրերը, պետք է պարբերական ժամանակահատվածներով ենթարկվեն մոնիտորինգի, քանի որ դրանք անմիջական ազդեցություն ունեն կենսամիջոցների ապահովմանն աջակցող ռազմավարությունների և պլանների պահանջվածության և համապատասխանության վրա:

Գործնական քայլեր արդյունավետ մոնիտորինգի ու գնահատման նպատակով

8.1 Մոնիտորինգի ու գնահատման արդյունավետ համակարգի մշակում և օգտագործում

Կենսամիջոցների ապահովմանն աջակցող ռազմավարական ծրագրի շրջանակներում ստեղծել մոնիտորինգի և գնահատման արդյունավետ համակարգ:

-- Ռազմավարական ծրագրի շրջանակներում սահմանել բազային ցուցանիշներ՝ հենվելով նախնական գնահատումների վրա, միջանկյալ արդյունքների չափելի նպատակային ցուցանիշներ և կատարողականի ցուցիչներ (ինդիկատորներ):

-- Ներառել մոնիտորինգի և գնահատման ժամանակացույցը և հաճախականությունը, ինչպես նաև անհրաժեշտ մարդկային, գործառնական և բյուջետային ռեսուրսները:

-- Թարմացնել կենսամիջոցների նախնական գնահատումների առանցքային արդյունքները, մասնավորապես՝ ամեն տարի թարմացնել տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի կենսամիջոցների նկարագրերը (ռեսուրսներ և կենսամիջոցների ապահովման ռազմավարություններ), որպեսզի հնարավոր լինի հետևել տնային տնտեսությունների կենսաապահովման կարողությունների, հնարավորությունների և եկամտի մակարդակների փոփոխություններին:

-- Տարեկան կտրվածքով գրանցել և փաստաթղթավորել շրջապատող բազմակարգություններում, հաստատություններում և գործընթացներում փոփոխությունները, որոնք ազդում են կենսաապահովման հնարավորությունների վրա:

-- Վերանայել և գնահատել կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունները և մեխանիզմները, ձեռնարկել ծրագրային միջամտությունները և ծրագրերը, որպեսզի դրանք արտացոլեն նոր առաջացած կարիքները և տեղերում առկա իրական վիճակը:

8.2 Գործունեության դաշտի մոնիտորինգ

Մոնիտորինգի ենթարկել փոփոխությունները, որոնք կատարվում են բազմակարգություններում, իրավական շրջանակներում և տեղական տնտեսություններում, գնահատել դրանց ազդեցությունը կենսամիջոցների ապահովման վրա:

-- Մոնիտորինգի ենթարկել բազմակարգությունների և օրենսդրության փոփոխությունները՝ ուղղված վախճանների աշխատանքի իրավունքի և զբաղվածության հասանելիության ընդլայնմանը, փոփոխությունները տեղական տնտեսության մեջ, որոնք ազդում են վախճանների կենսամիջոցների ապահովման վրա, օրինակ՝ բնակարանային պայմանները, շուկաների, հողի, կրթության և առողջապահության հասանելիությունը:

-- Ապահովել, որ հաշվետվություններ կազմվեն խտրական ֆազաֆախանությունների եւ վերաբերմունքի վերաբերյալ, եւ դրանց անդրադառնան համապատասխան դերակատարները (օրինակ՝ կառավարությունը, ՄԱԿ-ի գործակալությունները, մասնավոր հատվածը, արհեստակցական միությունները, եւ այլն): Ապահովել, որ տեղական իշխանությունները եւ առանցֆային գործընկերները ներգրավված լինեն տեւական այլընտրանֆային լուծումներ գտնելու գործում:

-- Ապահովել, որ տարին առնվազն մեկ անգամ իրականացնող գործակալությունների եւ ՄԱԿ ՓԳՀ-ի (բազմագործառուբային թիւների միջոցով) կողմից անցկացվի ծրագրերի ազդեցության մոնիտորինգ՝ շահառուների հետ հարցազրույցների եւ նրանց ընտանիքներ այցելությունների միջոցով՝ գնահատելու համար սոցիալ-տնտեսական նկարագրերը, ներառյալ՝ տնային տնտեսությունների կենսապահովման ռեսուրսները, կենսամիջոցների ապահովման ռազմավարությունները եւ եկամտի մակարդակները:

-- Կազմակերպել գնահատման համատեղ թիւներ, որոնցում կընդգրկվեն դոնորները եւ Կենսամիջոցների հարցերով համակարգող խմբի անդամները, եթե նման խումբ ստեղծվել է, նախաձեւնել ծրագրերի եւ նախագծերի ընդհանուր գնահատում եւ գնահատել թիրախային խմբերին ուղղված ծրագրային միջամտությունների ազդեցությունը:

8.3 Պարբերական եւ անկողմնակալ գնահատման կազմակերպում

Ապահովել, որ ծրագրի կամ նախագծի իրականացման միջնամասում կամ վերջում անցկացվի գնահատում: Այն պետք է չափի արդյունքները եւ գնահատի, թե արդյոք ծրագիրը կամ նախագիծը հասել է ակնկալվող արդյունքներին/ նպատակային ցուցանիշներին:

-- Կիրառել մոտեցումներ եւ մեթոդներ, որոնք տալիս են ծրագրի արդյունքների եւ ազդեցությունների պատեհաժամ եւ արժանահավատ ապացույցներ, որոնք կարող են տեղեկատվական հիմք հանդիսանալ ապագա գործողությունների համար: Գնահատել ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները եւ օգտագործել «եթե, ապա» պայմանական ենթադրություններ:

-- Իրականացնել համատեղ գնահատումներ՝ ապահովելով ազգային կամ տեղական մակարդակի պետական իշխանության մարմինների, ՄԱԿ-ի այլ գործակալությունների, դոնոր կազմակերպությունների, իրականացնող գործընկերների եւ համայնքների ներգրավվածությունը:

Նկարի գրառումը. *Եմեն / փախստականներ / Ինֆնտայվինման խթանման ծրագիր Բասթինում՝ Ադեն ֆաղաֆի (հարավային Եմեն) մի քաղամասում, որի բնակչության մաս 30%-ը կազմում են փախստականներ Սոմալիից / ՄԱԿ ՓԳՀ / Ռ. Նուրի / 2009 թ. ապրիլ*

9. Հանձնում

Կենսամիջոցների ապահովմանն ուղղված բազմամյա պլանի շրջանակներում մշակել եւ իրականացնել ծրագրի ամփոփման եւ հանձնման ռազմավարություն (որը նաեւ կոչում են «Էլֆի ռազմավարություն»)՝ նպատակ ունենալով ծրագրային միջամտությունները ռեսուրսատար եւ դրամաշնորհների վրա հենվող աջակցությունից աստիճանաբար վերածել

կենսամիջոցների ապահովման նպատակով առավել երկարաժամկետ օժանդակության: Ելքի ռազմավարությունը պետք է հիմնված լինի ծրագրային միջամտությունների ամփոփման վրա՝ այն բանից հետո, երբ ծրագիրը հասած լինի հաջող իրականացման հեռանկարներին, ինչպես նաև առավել հարակալուն միջամտությունների ներմուծման վրա: Նման ռազմավարության նպատակն է ադխատությունից դուրս գալու և մարդասիրական օգնությունից կախվածության վիճակից ձերբազատվելու ուղի ստեղծելը և դեպի ինքնապավինում վարժագծային փոփոխություն խթանելը:

Հանձնման գործընթացը կազմակերպելու գործնական քայլեր

9.1 Իրատեսական փուլային հեռանկարների և ժամանակացույցերի մշակում և դրանց շուրջ համաձայնության կայացում

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից սատարվող՝ կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունների ամփոփումը և գործընկերների կողմից սատարվող գործողությունների ներմուծումը պահանջում է աստիճանական և կանոնավոր մոտեցում, որը հիմնված կլինի բազմամյա ռազմավարական ծրագրերի վրա:

-- Կնքել համաձայնագրեր գործընկերների (կառավարություններ, ՄԱԿ-ի գործակալություններ, ՈԿԿ-ներ և համայնքներ) հետ (որոնք պատրաստակամ են և կարողությունների ու ռեսուրսների տեսակետից պատրաստ են)՝ ստանձնելու ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից սատարվող՝ կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունների իրականացումը և համաձայնության գալու փուլային հեռանկարների և հանձնման գործընթացի ժամանակացույցերի վերաբերյալ:

-- Կանխել կենսապահովման ծրագրերի կտրուկ անկումն այն ժամանակ, երբ միջոցները վերջանում են: Հսկայական խնդիր է եղել ծրագրերի ծավալների անակնկալ նվազեցումը կամ դադարեցումը, երբ, ի հետևանք բյուջետային կրճատումների, կորսվում են աշխատակազմը և ֆինանսական միջոցները: Այն ծրագրերը, որոնք դեռևս հարակալուն չեն և անակնկալ ձևով դադարեցվում են, ստեղծում են հավելյալ անորոշություններ փախստականների և տեղացիների համայնքներում և բացասաբար են ազդում նրանց կենսապահովման վրա:

-- Իրականացնել ուղղակի աջակցության և սուբսիդիաների աստիճանական կրճատում և կազմակերպել անցում դեպի կենսապահովման այլ ծառայություններ, ինչպիսիք են առևտրային միկրոֆինանսավորումը և բիզնեսի զարգացման ծառայությունների ու վերապատրաստման ազգային ծրագրերի հասանելիության տրամադրումը:

-- Որդեգրել մասնակցային մոտեցում՝ հեռանկարների որոշման նպատակով աշխատելով ինչպես փախստականների, այնպես էլ գործընկերների հետ: Հնարավոր փուլային հեռանկարները կախված են կենսապահովման տվյալ նախագծից և պետք է որոշվեն և փոխհամաձայնության առարկա դառնան շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ՝ յուրաքանչյուր դեպքի առանձին դիտարկելու համապարհով: Այս հեռանկարներին հասնելը կնշանակի, որ տվյալ խումբը պատրաստ է ՄԱԿ ՓԳՀ-ից ուղղակի աջակցություն ստանալուց անցում կատարել դեպի մյուս աստիճան, օրինակ՝ դառնալ միկրոֆինանսավորման տեղական հաստատության կամ բանկի հաճախորդ:

9.2 Հասանելի նպատակների ձևակերպում և դրանց շուրջ համաձայնության կայացում

-- Նվազեցնել ՄԱԿ ՓԳՀ ծրագրի միջոցով տրամադրվող օժանդակության եւ կենսապահովմանն աջակցելու նպատակով իրականացվող միջամտությունների կարիք ունեցող փախստականների քանակը:

-- Հավաստիանալ, որ ՄԱԿ ՓԳՀ-ն կամ գործընկերները, որոնք տիրապետում են բնագավառի վերաբերյալ գիտելիքի, գործեն որպես կապ ապահովող/միջնորդ օղակ՝ փախստականներին «ներկայացնելով» աջակցության հաջորդ աստիճանը («հետ-ՄԱԿ ՓԳՀ») եւ ապահովելով, որ նրանց համար կենսամիջոցների ապահովման ծառայությունները լինեն մշտապես հասանելի:

-- Ապահովել շահերի պաշտպանության ոլորտում արդյունքների ստացում՝ կապված փախստականների համար պետական հատվածի ծառայությունների, ինչպես նաեւ մասնավոր հատվածի ծառայությունների (օրինակ՝ բանկերը կամ միկրոֆինանսավորման հաստատությունները) հասանելիության ստեղծման հետ՝ միեւնույն պայմաններով, որոնք կիրառվում են ընդունող համայնքի նկատմամբ, որպեսզի փախստականները չսուժեն աջակցության անակնկալ կորստից:

-- Ապահովել, որ պետական կամ մասնավոր հատվածների տրամադրած ծառայությունների որակը լինի ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրվող ծառայությունների որակին հավասար:

-- Աստիճանաբար նվազեցնել ՄԱԿ ՓԳՀ-ի կարեւորագույն ֆինանսական պարտավորությունների ծավալը՝ կապված կենսամիջոցների ապահովմանն ուղղված գործողությունների հետ, եւ ապահովել առավել երկարաժամկետ աջակցություն գարգացման հարցերով զբաղվող դերակատարների կողմից:

Նկարի գրառումը. *Բուլղարիա / Այդաստան որոնող կանայք հաճախում են դիմահարդարման դասընթաց Սոֆիայի փախստականների ընդունման եւ ինտեգրման կենտրոնում / ՄԱԿ ՓԳՀ / Բ. Շչանգելսկի / 2010 թ. հուլիս*

ՀԱՎԵԼՎԱԾ

Կենսամիջոցների ստեղծման նպատակով առաջարկվող գործողությունների ցանկ	
Մրագրային նպատակ	Առաջարկվող գործողություն
Կենսամիջոցների տրամադրում	
Կենսամիջոցների տրամադրում՝ հիմնական կարիքները բավարարելու նպատակով	Օժանդակություն դրամաճեղարկների միջոցով (կանխիկ գումարի կամ ոչ դրամային տեսքով)՝ արտակարգ իրավիճակներում, բնակարանային պայմանների եւ հիմնական ծառայությունների սուբսիդավորում
Կենսամիջոցների պաշտպանություն	
Մարդկային կապիտալի պաշտպանություն եւ ընդլայնում	Անհատական հմտությունների ուսուցում, օրինակ՝ ֆունկցիոնալ գրագիտություն, թվաբանություն, տարրական ֆինանսական գրագիտություն, տեղի լեզվի ուսուցում, ՏՏ տարրական հմտություններ, կյանքի հմտություններ
Կենսամիջոցների պաշտպանություն՝ կանխելու ռեսուրսների սպառումը եւ հարմարվելու բացասական ռազմավարությունների որդեգրումը	Աշխատուժահեն միջոցառումներ վերաինտեգրման կամ համբարային պայմաններում (կանխիկ գումար կամ «սնունդ աշխատանքի դիմաց»՝ ենթակառուցվածքների շինարարության նպատակով, պայմանագիր համայնքի հետ)
Ռեսուրսների սպառման եւ հարմարվելու բացասական ռազմավարությունների որդեգրման կանխարգելում	Հնուտ անհատներին աշխատանքի տեղավորում ֆաղափային բնակավայրերում (առողջապահական, կրթական, թարգմանչական, գրանցման եւ այլ կենսական ծառայությունների տրամադրում փախստականներին)
Արտադրական կապիտալի (մարդկային, սոցիալական, բնական, ֆիզիկական) պաշտպանություն եւ եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացում	Պայմանների թելադրմամբ հատկացվող դրամաճեղարկներ՝ հմտությունների կատարելագործման դասընթացի հետ միասին՝ ուղղված բնական ռեսուրսների (ֆաղափային տնամերձերի մշակում, գյուղատնտեսություն, անասնապահություն, ձկնաբուծություն, մեղվապահություն, փայտանյութի կամ անտառային պտուղների հավաքում, աղյուսների արտադրություն, ֆարի կամ ավազի արտադրություն) կայուն օգտագործմանն օժանդակելուն՝

	սեփական սպառման կամ վաճառքի նպատակով
Արտադրական կապիտալի (մարդկային, սոցիալական, բնական, ֆիզիկական) պաշտպանություն եւ եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացում	ժամանակավոր սուբսիդիաներ արտադրական գործունեության նպատակով (բնական ռեսուրսների օգտագործում, արհեստներ եւ արտադրություն)
Մարդկային եւ սոցիալական կապիտալի պաշտպանություն եւ ընդլայնում, եւ աշխատանքի արժանապատիվ ռազմավարությունների որդեգրում	վերապատրաստման նպատակային փաթեթներ վարպետության, արտադրության, մանրածախ առևտրի եւ ծառայությունների մատուցման համար (էներակառուցվածքների շինարարություն եւ պահպանում, սարքավորումների տեղադրում, համակարգիչների նորոգում, էլեկտրական սարքերի եւ փոխադրամիջոցների վերանորոգում, առողջապահական եւ կրթական ծառայություններ, երեխայի խնամք, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)՝ Տեխնոլոգիաների հասանելիության համայնֆային կենտրոնների միջոցով
Սոցիալական կապիտալի պաշտպանություն եւ ընդլայնում	Այնպիսի հմտությունների խմբային ուսուցում, ինչպիսիք են առաջնորդությունը, կառավարումը, ասոցիացիաների կազմավորումը, համայնքի կազմակերպում եւ սոցիալական կազմակերպություն, կիրառելով ՏՀՏ-ներ
Մարդկային կապիտալի պաշտպանություն եւ ընդլայնում	Ջեռներեցության թեմայով ուսուցում
Ֆինանսական կապիտալի պաշտպանություն եւ ընդլայնում եւ եկամտի աղբյուրների կայունացում եւ դիվերսիֆիկացում	Ֆինանսական ռեսուրսների (խնայողություններ, դրամական փոխանցումներ, վարկեր) հասանելիության հովանավորում
Կենսամիջոցների խթանում	
Մարդկային եւ սոցիալական կապիտալի բարելավում եւ աշխատանքի արժանապատիվ ռազմավարությունների խթանում	Մասնագիտական զարգացման թեմայով խորհրդատվություն եւ զբաղվածության օժանդակող ծառայություններ, որոնք ներառում են աշխատության, վերապատրաստումների եւ աշխատանքի տեղավորման այլ ձևերի հովանավորում եւ աջակցություն համայնքի հեն կենտրոնների գրադվածության ցանցերին
Մարդկային եւ սոցիալական կապիտալի բարելավում եւ աշխատանքի արժանապատիվ ռազմավարությունների	Բիզնեսին աջակցության ծառայությունների հասանելիության դյուրինացում, ներառյալ՝ իրավաբանական, ֆինանսական եւ ցանցաստեղծման

խթանում	թեմայով խորհրդատվություն նոր ստեղծվող բիզնես միավորներին, «ինկուբատորային» օժանդակություն
Քաղաքական և սոցիալական կապիտալի բարելավում և աշխատանքի արժանապատիվ ազմավարությունների խթանում	Զբաղվածությանը, աշխատելու բույլությունը կամ բիզնեսի գրանցման բույլությունն առնչվող իրավաբանական ծառայությունների հասանելիություն
Ֆինանսական կապիտալի բարելավում և աշխատանքի արժանապատիվ ազմավարությունների խթանում	Օժանդակություն (ֆորմալ) ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովմանը

Նկարի գրառումը. Կոլումբիա / Ներքին տեղահանված անձինք / Լուս Ալտոս դե Կասուկա, Սյուդադ Բոլիվար չֆավոր արվարձան (տեղացիների լեզվով՝ «բարիո»), Բոգոտա: / ՄԱԿ ՓԳՀ / Բ. Հեգեր / 2006 թ. հունվար

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄԱԿ ՓԳՀ-ում առկա ռեսուրսներ.

Այցելիր Ինտրանետի այն էջերը, որոնք նվիրված են կենսամիջոցների ստեղծմանը. Պաշտպանության և գործառնական թեմաներ > Կենսապահովման միջոցներ [Protection and Operational themes > Livelihoods]

- «Ներդրումներ հանուն լուծումներ գտնելու. Գործնական ուղեցույց ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատանքներում միկրոֆինանսավորման կիրառման վերաբերյալ» [Investing in Solutions: A Practical Guide for the Use of Microfinance in UNHCR Operations], ՄԱԿ ՓԳՀ, 2011 թվական:
- «Կենսամիջոցների նախնական գնահատումներ և ազմավարություններ. օրինակելի ձև, ստուգողական ցանկ և ուղեկիցային սկզբունքներ» [Livelihoods Assessments and Strategies: Template, Checklist and Guiding Principles], ՄԱԿ ՓԳՀ, Գործառնական ծառայությունների վարչություն (ԳՄՎ), Գործառնական լուծումների և անցումային հարցերի բաժանմունքի (ԳԼԱԲ) Կենսապահովման ծրագրերի համար պատասխանատու ստորաբաժանում, 2009 թ. հուլիս:
- ՄԱԿ ՓԳՀ Գործառնական լուծումների և անցումային հարցերի բաժանմունք (ԳԼԱԲ) – Կենսապահովման ծրագրերի համար պատասխանատու ստորաբաժանում, «Քաղաքական փախուստի հետևանքների աշխատանքի իրավունքը: Կենսամիջոցների ստեղծման տարբերակներ և պաշտպանության տեսակետից հետևանքները» [“Urban Refugees’ Right to Work. Livelihood Options and Implications for Protection”], 2009 թ. հունվար:

Արտաքին ռեսուրսներ.

- «Փոքր ձեռնարկությունների ուսուցման և խթանման ցանց. Տնտեսական վերականգնման նվազագույն ստանդարտներ» [*Small Enterprise Education and Promotion (SEEP) Network: Minimum Economic Recovery Standards*], Երկրորդ հրատարակություն, 2010 թվական: <http://seepnetwork.org/Pages/EconomicRecoveryStandards.aspx>
- «Կենսամիջոցների ստեղծում. դաշտային ձեռնարկ հումանիտար գործողություններում ներգրավված աշխատակիցների համար» [*Building Livelihoods: a Field Manual for Practitioners in Humanitarian Settings*], հեղինակ՝ Փախստականների հարցերով կանանց հանձնաժողով [Women’s Refugee Commission]. <http://womensrefugeecommission.org/programs/livelihoods>²
- «EMMA. Արտակարգ իրավիճակներում շուկաների փաթեթագրում և վերլուծություն, EMMA գործիքների համախմբի ներածություն և հակիրճ նկարագրություն» [EMMA: Emergency Market Mapping & Analysis, Introduction and Overview of the EMMA Toolkit], http://www.microlinks.org/ev.php?ID=38407_201&ID2=DO_TOPIC³
- «Մասնագիտական ուսուցման ծրագրերի շաղկապումը շուկայում առկա հնարավորությունների հետ: Շուկայի գնահատման գործիքակազմ մասնագիտական կրթություն տրամադրողների և երիտասարդների համար» [*Linking Vocational Training Programs to Market Opportunities. Market Assessment Toolkit for Vocational Training Providers and Youth*], Փախստական կանանց և երեխաների հարցերով կանանց հանձնաժողով և Միջազգային և պետական հարաբերությունների ֆակուլտետ, Կոլումբիայի համալսարան: 2008 թ. հոկտեմբեր: <http://womensrefugeecommission.org/search?q=market+assessment>

² Այս դաշտային ձեռնարկը մշակվել է՝ գործնական աշխատանքում կիրառողներին տրամադրելու օգտագործելի սեղեկություններ և օգտակար գործիքներ, որպեսզի նրանք կարողանան նախագծել և իրականացնել կենսապահովման առավել արդյունավետ ծրագրեր. ծրագրեր, որոնք հիմնված են շուկայի պահանջարկի վրա և համահունչ են տեղական յուրահատկություններին, ծրագրեր, որոնք հենվում են քիթախային բնակչության շրջանում գոյություն ունեցող հմտությունների և փորձի վրա, և ծրագրեր, որոնք բարձրացնում են տեղաբնակների արժանապատվությունը և ընդլայնում նրանց հասանելի տարբերակները:

³ «EMMA»-ն գործիքների և ուղորդող նշանների հավաքածու է, որը մշակվել է մի խումբ ՈԿԿ-ների կողմից (Practical Action, Oxfam, և Միջազգային կարմիր խաչ)՝ օգնելու հումանիտար աշխատանքներում ներգրավված աշխատակազմին ավելի լավ հասկանալ, հարմարվել և օգտագործել շուկայական համակարգերը: «EMMA» գործիքները հարմարեցվող, մոտարկված, արագություն ապահովող գործընթացներ են, որոնք նախագծվել են՝ ուղորդելու աշխատակիցների, ովքեր շուկայական վերլուծությունների մասնագետ չեն: Չնայած «EMMA» գործիքակազմը նախատեսված է անակնկալ պատահող արտակարգ իրավիճակների համար, այն կեստորյամբ կարող է հարմարեցվել՝ ֆառաֆային բնակավայրերում կիրառման համար: